

Ծերենց

ԹՈՐՈՍ ԼԵԻՈՆԻ



eMatenadaran.

Ծերենց
Թորոս Լեւոնի

«Aegitas»

Ծերենց

Թորոս Լեւոնի / Ծերենց — «Aegitas»,

ISBN 978-1-77-246796-3

Ծերենց թէւ ուշ՝ 56 տարեկանին, 1877ին, լոյս ընծայեց իր առաջին պատմավէպը՝ «Թորոս Լեւոնի»ն, բայց անժանօթ գրչանուն չէր արեւմտահայ իրականութեան մէջ: Աշխարհաբարի որդեգրման ու մշակման նախակարապետներէն եղած էր, աշխոյժ մասնակցութիւն բերած էր հայոց Ազգային Սահմանադրութեան հաստատագրման պայքարին, նաեւ՝ Մկրտիչ Պեշկեպաշեանի հետ հաշտարար դերակատարութիւն ունեցած էր կաթոլիկութեան շուրջ ծաւալած Հասունեան եւ հակահասունեան բուռն պայքարներու շրջանին, կաթոլիկ արմատականութեան եւ ծայրայեղականութեան (Հասունեանական շարժումին) դէմ դիրքորոշուելով, բայց նաեւ կաթոլիկ հայերու դաւանական ազատ ընտրութեան իրաւունքը պաշտպանելով: Առաջինը եւ ամենէն հոշակաւորը՝ «Թորոս Լեւոնի»ն, որ Բիւզանդիոնի հակահայ խարդաւանքներուն դէմ Կիլիկիոյ հայոց Թորոս իշխանին մղած երկարամեայ պայքարին հերոսապատումն է, 1877ին լոյս տեսաւ եւ արագօրէն լայն ժողովրդականութիւն ապահովեց արդէն 55ամեայ հեղինակին:

ISBN 978-1-77-246796-3

© Ծերենց

© Aegitas

Содержание

ԳԼՈՒԽ Ա ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 1145-ԻՆ	5
ԳԼՈՒԽ Բ ԲՆԱԿԱՐԱՆ ԹԷ ԴԱՐԱՆ	9
ԳԼՈՒԽ Գ ԽՆԱՄԱԿԱԼ ՁԵՌՔԸ	15
ԳԼՈՒԽ Դ ԿԻԼԻԿԻՈՅ ՎԻՃԱԿԸ	19
ԳԼՈՒԽ Ե ԴԻՈՆՏԻՍ	22
ԳԼՈՒԽ Չ ԱՌԻՒԾԻՆ ԿՈՐԻԻՆԸ ԱՌԻՒԾ Է	27
ԳԼՈՒԽ Է ԱՐԾՐՈՒՆԵԱՅ ՇԱՌԱԻՂ ՄԸ	33
Конец ознакомительного фрагмента.	36

Մերնոց Թորոս Լեւոնի

ԳԼՈՒԽ Ա ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 1145-ԻՆ

Բոլորովին տարբեր քաղաք մ'էր 1142 Քրիստոսի թուականին Կոստանդնուպոլիս քաղաքը, որ, այսօր Ստամբուլ կ'անուանի. ամէն պատմիչք եւ ճանապարհորդք սքանչանալով կը պատմեն անոր հրաշնիքը, ար թէ Երուսաղիմ ժողովրդոց եւ թէ Ասիոյ արաբացվոց զարմանքը կը շարժէր: Հիմկու Նուրի Օսմանիէին տեղը՝ համբաւաւոր հռոմէական Տորոսը ըստած կրկէսն էր, ընդարձակ ձուածեւ տարածութեամբ, փառաւոր կամարակապ դահլիճներէ եւ արձաններէ շրջապատեալ, եւ մտից համար երկու յաղթական կամարքը կը յաջորդէին, 120 ոտք վերամբարձ տորիկեան սին մը Փիղիասի ձեռագործ պղնձէ Ապոլոնի արձան մը կը կրէր, որու գլուխը արեւու ճառագայթներ կը ցոլային՝ գաւազան եւ գունդ ի ձեռին: Պուրովեոնեան արքունիքը, որ հագար տարի կայսերաց բնակարանն եղաւ, իր փառաւորութեամբ, ընդարձակութեամբ եւ անրակառոյց հաստատութեամբ՝ գէր ի վերոյ էր, քան զկապիտուլոն, քան զպերկամայի արքունիքը, Ադրիանոսի Կ'իզիքի տաճարը, եգիպտական բուրգերը եւ փարոսը: Երեք գմբէթք անոր գլուխը կը պսակէին եւ պղնձէ ոսկեգօծ երդիկը իտալացի մարմար սիւներ կը վերցնէին. իր ահագին պարտեղները աստիճանաբար Պրոպոնդիտի ծովեզրը կ'իջնէին, հինգ եկեղեցի իր մէջ կը պարփակէր. փոխզացի կը ճեայ սիւներով կամարակապ եւ ամբաւ սենեակներն ու սրահները մոզաիկներով, արձաններով, պատկերներով, որ անսնողաց զարմանք կը պատճառէին: Արեւելեան պերճանք եւ արեւմտեան ճաշակ միացեր էին զարդարելու համար աս քաղաքը, օտարականը ապուշ կը մնար, երբ ամէն անկեան գլուխ՝ հոս ոսկեղէն դուռ, հոն մարմարիոնէ մարդկանց եւ կենդանեաց արձաններ, անդին պղնձէ փիղեր կը տեսնէր: Եւ զարման ժամանակ բնութեան գեղեցկութեան չափ չի կար. այդ գեղեցիկ ծովը ցամաք կը շրջապատէր իր հսկայ ծառերով, իր հարուստ բոյսերով, իր համով պտուղներով, իր գեղեցիկ առուակներով, սոխակներու երգերով, եւ Կ'ոստանդնի քաղաքը կանգուն իր բարձր պարիսպներով, որու ամրութիւնն էին երեք հարիւր ութսունվեց աշտարակք, վեհ կ'երէար քան զամեն մայրաքաղաք, դիրքով, օդով եւ իշխանութեամբ. եւ մոռցնել կուտաք Հռոմ, Երուսաղէմ եւ Բաբելոն:

Ժողովուրդը՝ ինչպէս բոլոր մեծ քաղաքներու մէջ՝ ամէն վիճակի մարզիկներով լեցուն, ամէն տեսակ կերպարանքներու եւ հագուստներու զանազանութիւն կ'ընծայէր աչաց. իսկ այն պալատին եւ կրկիսուն շրջակայքը, իշխանաւորաց գահաւորակները, ասպետաք ձեւերուն խրոխտութիւնը, զինուորաց արհամարհոտ գոռոգութիւնը, հասարակ ժողովրդեան զբաղման երթեւեկը դիտող աչքերու զբօսանք մ'էր: Բայց այս ժողովրդեան բարոյական եւ ներքին վիճակը արտաքին տեսքին տարբեր կերպով կը պատասխանէր. մէկ մասը քաղքին աղտոտ, զագիր, մշտնջենաւոր մութի դատապարտեալ, վասնզի հարուստները՝ տուներով կը նտղցնէին ճամփաները եւ աղքատներուն խաւար եւ աղտեղութիւն կը թողուին: Նեղ ճամփաներուն մէջ գողերն ու մարդասպանք կը վխտային, եւ ամէն շարագործութիւն կը դիրանար խաւարին մէջ: Արդարութիւն չի կար ամենեւին եւ ոչ ամօթ, վասնզի անզգամութիւնը օրէնքն երէ չէր պատժուէր եւ ոչ ալ հեղինակը կը նշմարուէր:

Այս վիճակին մէջ անշարժ բան մը թէ կար, որ փոփոխութիւն չէ կրած տարիներէ ի վեր, ծովն էր օձապտոյտ շրջաններով, որ Վոսփորէ ի վար, նոյնպէս անփոփոխ կը տարածուէր իր փայլփլուն եւ գեղեցիկ ալիքներով եւ երկինքը իր անջինջ պայծառութեամբ: Եւ աս ծովուն վրայ, ինչպէս այսօր, նաւերը, նաւակները կը վխտային, նաւաստիներուն աղաղակը, խուժանին շարժումնքն ու ժխորը ամէն բան կը կեն դանարներ, ձայները՝ փոխանակ թրքերեն լինելու՝ յունարէն էր, շարժումնքը աւելի եռանդուն էր եւ ասիական ծանրութեան տիպն քիչ ունէր:

Վեցաթի նաուակ մը Իշխանի կողմեր են կ'իջնէր ան միջոցին, ճղքեով ջուրը ուժգնութեամբ եւ կը մերձենար արքունեաց ծովեզրին, որ դէպի Պրոպոնտոս կը խոնարհէր: Պաղատական պաշտօնեայ մը՝ նաւուն մէջ դէկին քով նստած էր, քովը երիտասարդ մը, որ գրեթէ չէր խոսէր, եւ հագի միավանկերով քովը շարունակ խօսող պաշտօնատարին երբեմն կը պատասխանէր. ճերմակ բեռեզեայ նիւթ մը գլուխը փաթթած, լայն եւ բարակ մոխրագոյն վերարկու մը վրան, ասուէ բանուած բաճկոն մը հագի կ'երեւէր, որ իր անդրաւարտեաց վրայ կ'իջնէի, ոտքերը՝ կօշիկներ եւ վրան ամենեւին գէնք չի կար. կը նայէր, կը լսէր, կը տեսնէր, բայց իր սուր եւ խոր ու սեւ աչքերն իր երկայն արտեւանունքն երէն ծածեյալ, երբ դիմացինին երեսը կը նայէին, այն ժամանակ միայն պարզութեան եւ միամտութեան քօղ մը կ'առնուին. եւ իր միտքը բոլորովին հեռու էր:

Կարելի չէր սուր աչքի մը իր կորովի ձեւը չի նկատել, թէպէտ ինք թոյլ եւ անհոգ կերպ մը առնուլ կը ձեւանար. եւ աչքերը, որ մարած էին ընդհանրապէս յանկարծ ի մոռացութեան փայլակներ կ'արձակէին, իր դեռաբոյս ընչացքն եւ գանգուր մօրուքը մասամբ իր ծնօտը կը ծածկէին, մագերը գլուխը կը պսակէին. եւ այդ գօրատր ու շղուտ կազմուածքը հագի քսանքսաներկու տարու գինք կարծել կ'ուտար տեսողաց. միայն երկու հոնից մէջ խորհրդածութեան ուղիղ գիծը կրնար մատնել թէ այս պարզութեան տակ խորին խորհուրդներ կը ծածկուէին:

Նաուակը ծովեզրը գտաւ, եւ պաշտօնատարին զինուորներն ու ծառաները դուրս թափուեցան օգնելու իրենց տիրոջը, որ իշխանական ծանրութեամբ քայուերն կ'առնուր. իսկ մեր երիտասարդը առանց քերանը բանալու, տարեց գրեթէ հիսնամեայ՝ մարդու մը ձեռք տուաւ եւ ելաւ, եւ իբրոյ թէ աչքերը գոց՝ կը հետեւեր պաշտօնատարին, որ երբեմն ետին դառնալով իրեն աչք մը ձգելով պարտէզներու, ծաղիկներու, արուեստական վտակներու, կամուրջներու եւ արձաններու մէջնէն կը շարունակէր իր ճամփան մինչեւ հասան փառատր դռան մը առջեւ, ուր շքեղագարդ սպասաւորաց եւ թիկնապահաց խումբ մը կ'իմացնէր ինքնակալին ներկայութիւնը. հոն պաշտօնատարը առաջ անցնելով՝ նուաստ խոնարհութեամբ ողջունելով գոռոց երիտասարդ մը, որ անձնապահապետի պաշտօնը ունել կ'երեւար, անոր ցոյց տուաւ պատանին եւ կամաց ձայնով մը՝ «Ահա ապստամբ հայուն որդին, գօր ըստ բարձր հրամանի բերի», ըսաւ: Երիտասարդ անձնապահապետը, որ կոմսի տիտղոսն ունէր, ամենայն ամբարիտութեամբ «Սպասեցէ՛ք» պատասխանեց եւ գլուխը անդին դարձուց: Իսկ ապստամբին որդին բառի մը, շարժումնքի մը, վատութեան մը, ամբարտաւանութեան մը եւ ոչ փոքրիկ մասնիկը կորսնցուց, իր ծածկեալ աչքերը ամեն բան կը տեսնէին, եւ իր անտարբերութիւնը ամեն բան կը լսէր: Եւ որ զարմանալին է, այդ ամբարիտաւճ արհամարհանաց, այդ երիտասարդին յունական ախողոսին ներքեւ հայ մը նշմարելով նաեւ՝ անդրդուելի կերպարանքը հաստատ պահեց: Վասնզի սրտին անթափանց խորերուն մէջ իր արհամարհանքը կայսերական պալատին գմբէթն երէն ալ աւելի բարձր էին. վասնզի արդէն որոշած էր իր նշանավճիռը՝ – Համբերութիւն անխառն: Ուստի նոյնպէս մարած աչքերու քօղով կը դիտէր այդ թիկնապահաց զինուորական խումբը, որ 3500 հոգի էին ի հայոց մեծաւ մասամբ կազմեալ՝ ոսկի եւ արծաթ գէնքերով պերճացեալ: Ամեն վայրկեան շարունակ կը հասնէին երեւելիք, յարգապատիւք, ամենապայծառք եւ ամենակատարալք, նաեւ ամենաազնուականք՝ անդամք կայսերական ընտանեաց: Իսկ ծերակուտական ծերոց, հիւպատոսներ ու, ներքինապետներու, պատրիկներու, սեբաստոսներու, գօրավարներու, կիրապալատներու, գանձապետներու, մետրապոլիտներու եւ ուրիշ բարձրաստիճան կղերականաց եւ իշխանագուն տիկնանց եւ օրիորդաց անբաւ շարժումնքը, անոնց ճոխ պերճանքն, ուր ոսկեթել կերպասներ, ծիրանիներ, ակունք եւ մարգրիտք աչքերը կը շլացնէին՝ աննկարագրելի էր, ինչպէս իւրաքանչիւր իրարու հանդիպած վայրկենին սիրոյ, բարեկամութեան, քաղաքավարութեան ցոյցերը, որ աստուած միայն գիտէր թէ ինչչափ ատելութիւն, ինչչափ նախանձ, ինչչափ հեռու կը ծածկէին ըստ մեծի մասին: Եւ Ապստամբին որդին այս ամեն կը գիտէր՝ եւ կը խորհրդածէր իր միամիտ կերպարանաց տակ, մինչ մեծ շարժումնք մը բոլոր պալատականք կը դորդէր իմացնելով թէ կայսերական ներքին սենեակները բացուեցան: Նոյն վայրկենին զինուորական հագուստներու պարզութեամբ մարդ

մը կորովի եւ քաջակառոյց կազմուածքով, դիտող աչք մը յանկարծ նետեց մեր պատանուոյն, եւ դէպ իրեն ուղղելով քայլուածքը՝ հեզնող ամբարտաւանութեամբ վերեն վար գննելով «Կերդնում, – ըսաւ, – որ ապստամբ Լեւոնին տղան ես դու». եւ առանց պատասխանին սպասելով՝ «Հայրդ նախ երբեմն Կիլիկիա ճանչցայ, եղբայրդ հոս ճանչցայ», եւ քանի մը ներկայից դառնալով արհամարհանք մը ատելցուց. «Առիծներն ալ իրենց վիժածը ունին»: Եւ իր երկայն սուրին շառաչիւնովը հեռացաւ, եւ ամէն սէքնեթեալ պալատականք խորշելով ճամփայ կ'ուտային իրեն, մինչեւ անհետացաւ:

Մերը, որ իր երիտասարդ տիրող քով կեցէր, յարգանօք եւ արձանի պէս մինչեւ նոյն վայրկեան կենաց նշան ամենեւին չէր տուած, աս վերջի նախատանաց ձայնն յանկարծ ցնցուելով մը անոր աչքերը դարձուց, որ անշարժ, իբր անզգայ, հանդարտ ձայնով մը «Ի՞նչ է, Բաբկէն», հարցուց:

– Լսեցի՞ր, տէր, աս մարդուն հայիոյութիւնը:

– Լսեցի:

– Գիտե՞ս թէ ով է այն անզգամը:

– Գիտեմ, Անդրոնիկոսն է:

– Ո՛հ, թէ որ ինձի թողուիր...

– Գիտեմ ինչ պիտի գրուցես, գիտեմ թէ ի՞նչ կ'ընէիր, բայց քեզի գրուցէր ես թէ ես եւ ինձի հետ գտնուողները ոչ կիրք, ոչ բարկութիւն, ոչ զօրութիւն, ոչ ցոյց, ոչ խելք եւ ոչ զգայութիւն պիտի ունենան. ուրեմն պէտք է իմ օրինակիս հետեւիս եւ դու՛ մինչեւ որ ժամանակը գա: Համբերել եւ լռել, ա՛յս է մեր օրէնքը:

Եւ այս խօսքերը այնպիսի ցուրտ արեամբ եւ անհոգութեամբ եւ կամաց ձայնով գրուցուեցան, եւ Բաբկէն վայրկեանին այնպիսի անհոգ ձեւ մը առաւ, որ ոչ ոք կրցաւ նշմարել թէ աս խօսքերը ապագային վրէժխնդրութեան օրէնքը կը պարունակէին:

Եւ ահա արքունի սենեկապետ մը մօտենալով այս մեր խումբին՝ «Հայ Լեւոնի որդին Թորոս ո՞վ է», հարցուց: Երիտասարդը իբր քունէ արթնցած՝ «Ես եմ», պատասխանեց: «Եկ ուրեմն, կայսրը քեզ կուզէ», ըսաւ: Երբ գահույից սենեկին առջեւն հասան, պահապանք ըստ սովորութեան Թորոսի վրայ փնտրեցին, որ զէնք չի գտնուի. արարողապետն իրեն իմացուց թէ ինչ էր երկրպագութեան եւ շարժման ձեւը, եւ իբրեւ թէ կասկածելով լսողին իմացականութեան վրայ կրկնեց ու ներս մտուց:

Արծաթէ պատուանդաններով ոսկեղէն գահույից վրայ նստած էր Մանուէլ Կոմնենոս կայսրը, զօր մեր պատմիչք Կիո Մանուէլ կ'անուանեն, Կոստանդին Պերպերուժենին որդին էր, որ զլեւոն գերի տարեր էր: Յաղթանդամ եւ կորովի երիտասարդ մէր, պսակն ի գլուխ, գաւազան ի ձեռին՝ շրջապատ եալ ինչ որ բնութիւնը եւ մարդկային արհեստներն սքանչելիք կրցեր են ստեղծել, չորս կողմը պար առեալ, մեծամեծաց եւ տիկնանց. «Վե՛ր կաց, որդիդ Լեւոնի, – ըսաւ կայսրը, – արեւ եւ ազատութիւն կը շնորհեն քեզ, տուն եւ ռճիկ եւ ամէն պիտոյքդ գանձեն պիտի հոգացուին. ջանայ արժանի լինիլ բարութեանցս, եւ երախտագիտութիւնն լինի քու առաքինութիւնդ»: Եւ դառնալով կղերականաց բազմաթիւ խումբին, ուր բարձրաստիճան պատրիարք, մետրապոլիտք եւ եպիսկոպոսք ծանր եւ պատկառելի շարուած էին՝ «Իմ կրօնական դիտաւորութիւնքս ալ, սուրբ հարք, ետքը ձեզի կ'իմացնեն եւ կը փափագիմ, որ այս ազնուական երիտասարդին հոգեկան դաստիարակութեանն ալ խնամք չի մոռնար»: Խորին խոնարհութեամբ սուրբ հարք պատասխանեցին, իրենց սայրասուր աչքերը հայ երիտասարդին վրայ նետելով:

Կայսերական ընդունելութիւնը վերջացաւ, եւ Թորոս դուրս ելաւ գահույից սենեկէն եւ հագի թէ քանի մը քայլ հեռացաւ, փոքրահասակ մարդ մը, որ անձին մեծութիւն տալու համար՝ կրցածին չափ կանգուն վիզը կ'երկնցնէր, գուարթ երեսով մը իրեն մօտենալով՝ «Կայսրը ինձի հրամայեց ձեր անձին պիտոյքը խնամք հոգալ, ուստի հրամայէ, որ երթանք միատեղ ձեր բնակարանը ձեզի ցոյց տալու»: Թորոս անխօս սկսաւ հետեւիլ մարդուն:

Հագի թէ քանի մը քայլ մնացեր էր պալատին մեծ դռան, եւ ահա պարզ հագուած մարդ մը մօտեցաւ մեր կարճահասակ կոկոզավիզ պաշտօնատարին եւ կամաց ձայնով մը

սկսաւ խօսիլ, եւ քիչ մ'առաջ անցնելով, մեր կարծուկը կանգ առաւ, եւ բարձրկէլ ձայնով բայց խոնարհաբար՝ «Խնդրեմ, – ըսաւ, իր բարձր վիզը վար առնելով, – խնդրեմ քիչ մը սա սենեակը մտնենք, որպէսզի իմանամ թէ ի՞նչ է ձեր յանձնարարութիւնը»: Երբ սենեակը մտան մեր չորս անձինքը, Թորոսին նստարան մը հրամանցելով, որու մօտ արձանի պէս կանդնեցաւ Բարկէն, իրենք բաւական հեռացան, ան ատեն պաշտօնատարը ըսաւ շփոթ ձայնով մը:

– Չեմ կրնար հասկնալ թէ իմ պաշտօնս ի՞նչ պիտի լինի ան ատեն:

– Ձեր պաշտօնը պարզ ձեռք մը պիտի ունենայ եւ շատ հանգիստ. ի՞նչ ռոճիկ, ի՞նչ ծախք որ պիտի ընէք կամ պիտի համարուիք ընելու թէ տան վարձու, թէ սննդեան, թէ զգեստի, թէ ծառայի եւ վերջապէս ամէն բանի համար պարզապէս ծոցերնիդ դնելու նեղութիւնը պիտի քաշէք: Ահա այսչափ եւ աս ալ կարծեմ շատ ծանր եւ անտանելի բեռ մը չի կրնար համարուիլ ոիցէ մարդու համար:

– Իսկ իմ պաշտօնս ի՞նչ պիտի ըլլայ:

– Կ'երեւայ, որ չի կրցայ իմացնել, թէպէտ շատ որոշ գրուցել կարծեցի: Փոխանակ այս ազնուական երիտասարդին խնամոց հոգը ունենալու, ծախքերն ընելու, վերջապէս իր մատակարարը լինելու, ամենեւին բան մը պիտի չընէք, երբ կայսերական թոշակներն կ'ելնենք կ'առնէք ծոցերնիդ կը դնէք, ողորմութիւն կ'ընէք, եկեղեցեաց կ'ուտաք, ի՞նչ կ'ուզէք, կ'ընէք:

– Այդ իմացայ, բայց ես ի՞նչ պիտի լինիմ:

– Տէր էք լինիչ ի՞նչ որ կամիք լինել, ինչո՞վ, որ կ'ուզէք ըզբաղիլ:

– Ի՞նչ գրուցեմ թէ որ հարցնեն այս երիտասարդին համար:

– Ես ձեզ կ'ապահովեմ, որ մէկը բան մը պիտի չի հարցնէ եւ դուք ալ ազատ կ'ըլլաք չի պատասխանելու:

– Բայց թէ որ ետքը խնդիր ըլլա... .

– Իմ, այսինքն՝ ինձի յանձնողաց կողմանէ, եւ սա հայ երիտասարդին կողմանէ ամենեւին խնդիր մը չի կրնար ծագիլ, միայն քեզի կը մնա խոհեմութեամբ վարուիլ քու հաշիւներուդ մէջ եւ չափազանցութեամբ բան ամենեւին չընել, որպէսզի վերջը խոյզ խնդիր լինելով թէ դու քու վատակող չի կորսնցնես եւ թէ՛... վերջապէս դու չի վնասուիս:

– Հիմա հասկցայ, – ըսաւ մեր բարեկամը խորին յարգանքով եւ գուարթութեամբ, – շատ շնորհակալ եմ, որ ինձի այսպէս տիրութիւնը մը կ'ընէք եւ իմ շահերուս այսպէս կը պատասխանէք, աս ձեր բարեկամութեան չեմ գիտէր թէ ի՞նչ տեսակ շնորհակալութիւն ընեմ:

– Միմիայն մէկ կերպով, այսինքն՝ լուռ եւ անշունչ մնալով, ամենեւին եղածին վրայ ուրիշներու հետ չի խօսելով եւ թէ որ կը ներէք ըսել՝ չի շողակրատելով. վասնզի տան ատեն կ'իմացուի եւ գանձը ձեզի բան մը գի վճարէր:

– Իրաւունք ունիք. ուրեմն ես երթամ, քանի որ իմ պաշտօնս յայտնի եղաւ:

– Այո՛, բայց միայն սա դռնէն գոնէ մէկտեղ դուրս ելնենք:

– Շատ լաւ, սիրով, – ըսաւ մարդը, եւ քանի մը քայլ առաւ դէպի դուռը, յանկարծ իբրեւ ի քունն արթննալով եւ խելաբրելով դարձաւ ի բարի խրատուին՝ «Բայց դուք ի՞նչ շահ ունիք, – ըսաւ, – այս գործիս այսպէս լինելուն, որ ինձ այսչափ բարութիւն կ'ուզէք ընել, ա՛յդ կ'ուզեմ իմանար:

– Թէ որ դուք այսչափ շատ հետաքրքրութիւն ընել կ'ուզէք եւ ինձի այնպէս բանէր կը հարցնէք, որոց պատասխանը չեմ գիտէր, ինձի ուրիշ բան չի մնար, այլ միայն քալել երթալ, վասնզի ինչպէս դուք բարձր հրամանաց հնազանդելու պարտաւոր էք, նոյնպէս եւ ես եւ թերեւս ատելի:

Ուստի քիչ մը ատեն կանգ առաւ, եւ դարձեալ մտածն լեն վերջը արթուն պաշտօնատարը հաշիւ մընելով, որ այն մարդուն խօսքին մտիկ ընելն էր իրեն համար շահաւոր՝ «Գոնէ, – ըսաւ, – ինձ իմացուցէք, որ ո՞ր պիտի նստին աս անձինքը, որ երբ ինձ տեղեկութիւն մը հարցնեն, կարենամ պատասխանել:

– Շատ լաւ, – ըսաւ խօսակիցը, – երթանք մէկտեղ:

ԳԼՈՒԽ Բ ԲՆԱԿԱՐԱՆ ԹԷ ԴԱՐԱՆ

Այսպէս երկու յոյն առջեւն եւ Թորոս ու իր ծառան ետեւնուն անցան արքունի դռնն, որ ի կրկէս կը հանէր, նոյնպէս կրկին յաղթական կամարներէն, եւ վերջապէս մտան բուն քաղաքը, ուր բարձր երկայն պատեր, մեծամեծ դռներով պալատներ, եւ երեւեյաց տուներ կը նշանակէին, որոց երբեմն կը յաջորդէին փոքր եւ ցած փայտաշեն տներ, եւ ուր տեղ-տեղ ժողովուրդը կը խոնուէր, ինչպէս ամէն մեծ քաղաքներու սովորական է, եւ դարձեալ ամայի փողոցներ, մինչեւ հասան պարզ դռան մը առջեւ, որ բարձր քառակուսի պատի մէջտեղ բացուած էր, եւ երբ դուռը գարնուեցաւ, շուտ մը բացուեցաւ, սովորական պարտէզ մը տեսնուեցաւ քանի մը մեծամեծ ծառերով եւ խիտ առ խիտ վարդենիներով զարդարուած, պարտէզին վերջին ծայրը բնակութեան տունն էր. կրկնայարկ տուն՝ բոլոր պատուհաններն պարտէզի վրայ կը հայէին երեք կողմն. իսկ ինչ որ ծառայութեան կը վերաբերէր՝ միայնակ պարտէզին դռան քովի պատերուն տակ շինուած էր:

Դուռը բացողը իր հա գուսան երէն յայտնի՝ սովորական մաքուր տունի մը ծառայ էր, եւ երբ աս մեր չորս անձինքը ներս կը մտնէին, տարէց կին մը խոհանոցին դռնն գլուխը դուրս երկնցնելով կը նայէր բնական հետաքրքրութեամբ մը: Դռնն ներս ոտուրնին դրածուն պէս առաջնորդը դարձաւ ըսաւ կարճուկին.

– Բարեկամ, ահա տունը ճանչեցիք կարծեմ, ունի՞ք ուրիշ փափագ մ'ալ:

– Ո՛չ, այլ...

– Ուրեմն մեր կողմնակի դաշնադրութիւնը կատարեալ է ըսելով այնպիսի ձեւ մ'առաւ, որ կ'իմացնէր դիմացինին թէ երկայն խօսելու ժամանակ չի կար. ուստի նա ալ հասկնալով, բարեւ մը տուաւ. եւ դուրս ելաւ, թողլով իր երեք ընկերները այդ տան առանձնութեան չորս պատերուն մէջ, որ տաճկի կանանոցի կամ կուսանաց վանքի մը կը նմանէր եթէ իր փոքրիկութիւնը չլինէր: Երբ դուռը գոցուեցաւ, ան ատեն անձանօթը պարզ եւ խորին յարգանքով դարձաւ Թորոսին եւ ձեռք տանը ներքին դուռը ցցնելով՝ «Կ'ուզէ՞ք, իշխան, ձեր բնակարանը տեսնել, – ըսաւ, – եւ ինչ որ պակաս կայ հրամայել ձեր ծառային»: Իսկ նա, որ տարիներ է ի վեր բացի իր Բաբկէնէն ուրիշէ մը այսպիսի վարմունք չէր տեսած, դարձեալ ամենեւին զարմանք ցոյց չի տալով իր անտարբեր կերպովն առաջ անցաւ, գտաւ փոքրիկ սրահ մը, երկու սենեակ երկու կողմը, որոնց մէկը սեղանատուն էր, միւսը՝ հիւր ընդունելու սենեակ, իրենց ամէն կարասիքով. սրահին ծայրը սանդուխ մը, որ վերի յարկը կը տանէր, ուր նոյնպէս երկու սենեակ կար մին անկողնոյ, միւսը՝ աշխատութեան, ուր բացի կարեւոր բազմոցներէ եւ կարասիքներէ, կային մաքուր գէնքեր պատերէն կախուած. անկողնոյ սենեակը ազնուական երիտասարդի մը պէտք եղած ամէն զգեստեղենք կային, նոյնպէս անկողնոյն պարզ եւ ազնի հանդերձանքը կ'իմացնէին թէ արթուն կնոջ մը աչք կամ ձեռք անցեր էին հոնկից. Փոքրիկ բաղանջաց խուց մը՝ անկողնի սենեկէն դուրսը կը գատուէր: Երբ աչս ամէնքը տեսան, առաջնորդը դարձեալ, «Դեռ ի՛նչ բանի որ պէտք ունիք, իշխան, խնդրեմ, հրամայէք», ըսաւ: Իսկ Թորոս առաջին անգամ իր սուր աչքերը ցցնելով դիմացինին, ըսաւ. «Վայրկեան մ'ալ սա սենեակը դառնանք»: Եւ երկրորդ անգամ դիմացի սենեակը մտնելով՝ շիտակ ձեռքը երկնցուց կորածեւ ահագին սուտերին, որ պատեն վար կախուած էր, վար առաւ, կէս մը քաշեց պատենն, գննեց, եւ ճանչնալով իր հօր՝ Լեւոնին սուրը, եւ դարձեալ իր տեղը զետ եղելով՝ «Բարեկամ, – գրուցեց հատիկ-հատիկ բառերուն վրայ կենալով, – կը գրուցես անոր, որ աս տունը պատրաստեց, եթէ հրեշտակ է՝ իմ սրտիս կէսն իրն է այս վայրկեան», եւ կեցաւ: Մարդը՝ «Երբ հրաման ընէք հոստեղի սպասատրին՝ պատրաստ եմ միշտ ձեր ծառայութեան», ըսաւ եւ խոնարհ ձեռով ողջունեց ու գնաց:

Ան ատեն Թորոս դառնալով ծառային՝ «Բաբկէն հայրիկ, – ըսաւ, – սա տանը դիրքը տեսա՞ր, ել, քանի որ մութը չէ կոխած, շուրջ պտոյտ մը ըրէ, դիտէ առանց դիտելու, տես առանց նայելու, նայէ սա տանը կոնակը ի՞նչ տեղի կը պատասխանէ, սա պատը ինչի՞ յեցեալ է, տո՞ւն է թէ պարտէզ, տեղեկութիւն մը. մուշանար, որ կերակուր ուտենք»:

Երբ Բաբկէն գնաց, ելաւ Թորոս անշշունջ քննելու տախտակամած պատերուն շէնքերը, ամենն փորքիկ ճեղքը մանր գննութեան նիւթ եղաւ իր արծուի աչքերուն, եւ վերջապէս անկողնոյ սինեկին մէջ կանգնեցաւ հատուածոյ տախտակի մը առջեւ եւ հեզնական ժպիտ մը ծնաւ իր շրթանց վրայ: «Ահա իմ փնտրածս, – կ'ըսէր, – դաւաճան տախտակ, դուն բիզանդացի դուռ մ'ես, բայց ի՛նչ կը ծածկես քու կոնակդ, իրաւ սա անկողինը, սա բեհեզեայ վարագոյրները, սա զգեստներուն ծալքերը նաեւ կը գրուցեն թէ հրեշտակի մը թեւերը անցեր են անոնց վրայեն, բայց հազար տարի առաջ վկայուած է թէ խաւարի հրեշտակներ կային, որ լուսոյ հրեշտակաց կերպարանք կառնուին, եւ սա քաղքիս մէջ, սա անիծեաղ Բաբելոնին մէջ լուսոյ հրեշտակ, ի՛նչ անկարելի հրաշք է. լաւ, այս ամէն աղէ՛կ, բայց հորս սուրը ներսի սենեակը կախուա՛ծ, ի՛նչ կը նշանակէ, ո՛վ կը նշանակեն կի՛ն մը. բայց այդ սուրը յաղթանակի յիշատակաց գանձատունն հանուած է, ի՛նչ տեսակ կին կրնայ լինիր Բայց այսօր ինչչա՛փ նոր պատահարք իրարու կը յաջորդեն. բանտէ ազատիչ, եղբօրս դաւաճանը տեսնել, որ զիս կարհամարիէ, կայսրը ու իր ամբարտաւան պատգամը, որ մինչեւ իմ հոգիս հայութենէ հանել կուզէ, իր բոլոր ժողովրդեան հոգին քաղէր իր քահանաներուն հետ բաժնէր եւ աստուծոյ բան մը չէ ձգէր: Ո՛հ, թէ որ այդ մարդը իր թագին եւ իր ժողովրդոց օգուտը ճանչեր, կամ թէ ես իր տեղը լինէի՛: Ես իմ բանտիս մէջ ի՛նչ որ իմ ազգիս, իմ տոհմիս անցեալին վրայ սորուեցայ իմ հորմես, ի՛նչ որ աս հին յունաց եւ արդի հռոմոց վրայ ուսայ իրենց գրքերեն, որ իրենց վանքերուն գրքատանց մէջ փոշոտած եւ որդնոտած էին՝ թէ որ այդ մեծ թագով պսակեալ գլուխը ուսած լինէր՝ անշուշտ այդ յիմար ճառատանքը ինձի չէր ընէր. եւ փոխանակ զիս նկունս արհամարհելու, իմ ազգս հալածելու՝ արեւելեան քրիստոնէութեան փաղանգ մը կը կազմեր կեդրոնացնելու համար իր ազգը եւ գնեզ, որպէսզի արեւելքի եւ արեւմուտքի յարձակմանց կարէնար դիմանալ, որոնց կամ մէկուն եւ կամ միւսին առջեւ օր մը դիաթաւալ պիտի կործանի, եւ այս մայրաքաղաքը պիտի դառնայ Անի մը հափափեալ եւ առեւանգեալ: Բայց ո՛վ զիս մոռացեալս, ծովուն անապատի բանտեալս՝ յիշել տուաւ այդ տղայամիտ կայսեր, ար ինձ արեւ եւ ազատութիւն կը շնորհէ. ո՛հ, իմ Մեւ լեռան պայծառ արեւ, ե՛րբ քու սեւ ժայռերուդ վրայ պիտի կանգնիմ, եւ գթորոս ան ատեն պիտի տեսնեն իմ ազգս եւ օտարները, չէ՛ թէ տղայ մը, որ վերեն վար կը կշռեն, այդ հսկայ մը, որու հետ խօսելու համար պէտք է վարեն վեր խօսիմ. եւ պէտք է այդ Անդրոնիկոս համոզուի, թէ կորիւնը առիւծ է. ո՛հ դաւաճաններ, խեղճ երիտասարդ մը իրօք առիւծ էր, կորիւն առիւծու, իմ եղբայրս, իմ Ռուբենս, ճիշտ (այսօրուան տարիքս ունէր, առիւծի ուժ, առիւծի սիրտ ունէր. աչքին լոյսն առի՛ք արեւը խաւարեցուցիք. երեք մտանք բանայ, անոնք հոն հալումաշ մեռան, եւ ես մինակ կ'ելնեմ, բայց խրատուած անոնց օրինակեն եւ անոնց սխալներէն: Ո՛վ աստուած իմ, տո՛ր ինձ մտաց կարողութիւն չի մատնելու զիս, մինչեւ, որ Ռուբինեան խաչին դրօշակը տնկեն Տորոսի բարձանց վրայ: Բայց ահա առջի քայլերս ինձի կը ցնցեն աս խաւարին մէջ, աս անոք, անօգնական թշնամի երկրին մէջ բարեկամ ձեռք մը առ իս կարկառեալ. բայց բարեկամ հազար ձեռքեր միթէ իմ հարազատիս չէի՛ն կարկառեալ. գեղեցիկ, անձնեայ, կորովի, անվեհեր, սիրելու համար, բարեկամութեան համար միայն ստեղծուած, ո՛վ կրնար ըսել թէ մարդ մը կրնար գտնուիլ, որ զինքն ատէր, կանայք բոլոր իրեն սիրահար էին, երիտասարդք բոլոր իր ձեռքը կը փնտրէինք ո՛հ բիզանդեան սէր, ո՛հ բիզանդեան բարեկամութիւն. աս քաղքին պարիսպները ինչքա՛փ անիծեալ կիրք կը պատսպարէն. այդ պալատին ոսկեգօծ շողշողուն գմբէթները քանի՛ գազիր ապականութեանց շիրիմներէն: Իրաւ հորս սուրը իմ սիրտս շարժեց, բայց միթէ Անդրոնիկոս ինք չի կրնար լինիլ այդ սուրը հոս՝ սա՛ պատեն վար կախել տուողը, որպէսզի զիս ալ եղբօրս ճամփան դրկէ եւ ազատի ան վրեմխնդրութենէն թէ որ Ռուբենի նման եղբայր մը՞ կա... բայց Ստեփանէ՛ բայց Մլե՛հ ի՛նչ եղան, ձայներնին չի կայ. թէ որ անոնք շարժէին, կեանքի նշան տային, զիս բանտեն հանող մը անշուշտ չէր գտնուէր... Կիլիկիա Ի՛նչ վիճակի մէջ է, ո՛վ ինձի տեղեկութիւն մը պիտի կարենայ տալ... Ես... այո՛, ես. պէտք է անձամբ երթամ, բայց մինչեւ այն օրը ես պէտք է լինիմ ան հռովմայեցոյն պէս, որ իր հայրենիքը ազատելու համար սուտ խենթ մ'եղաւ, ես ապուշ մը կ'ըլլամ, եւ թէ որ նա զիս այնպէս կարծեն՝ հաւանական է թէ բոլոր պալատականք այնպէս պիտի կարծեն: Բայց ապուշ մը կին կրնա՞յ սիրել... այդ դուռը դնող, այդ սուրբ կախող ձեռքը իմ դիմակս հաւանական

թէ կուզէ սկրդել... տեսնենք ո՞վ պիտի յաջողի այս խաղին մէջ, եւ յաղթութիւնը որո՞ւ պիտի լինի: Անշուշտ իմս, այո՛, իմս պէտք է լինի. վասնզի ես ցամաքի եւ ծովու պիտի տիրեմ. այս է գուշակութիւնը... այո՛, գուշակութիւն երագի. բայց ի՞նչ է երագը, ո՞վ կրցեր է մեկնել անոր ուսկից գալը, ի՞նչ է անոր նշանակութիւնը... ես ուզեցի իմանալ երագը՝ Մովսէսի Ծննդոց գրքէն մինչեւ Գորգիաս Լեւոնդացի, Դանիէլի Բաղդասարէն մինչեւ Բոթակոր Ապտերացի, եւ համոզուած եմ թէ երագները նշանակութիւն ունին, երբ որոշ են, պարզ հոգուոյ, յստակութեան քունի մէջ եւ ծնունդ հանդարտութեան մտաց, եւ իմ փառաւոր ծերս յիրաւի աստուածային կերպարանք ունէր իր վսեմ եւ լուսալիր դէմքով, իր փառահեղ մօրուքով, իր նշոգագեց աշօք, որու ակնթարթը զիս տղայութենէ ի մարդ փոխարկած էր, երբ արթնցայ: «Ի՞նչ, – ըսաւ հայրս Լեւոն, – հացը՝ հայրենի հող, ձուկը՝ ծով կը նշանակէ, դու ծովու եւ ցամաքի պիտի տիրես, ու ես չպիտի տեսնեմ»: Եւ իրօք քանի մը օր անցաւ ու ինք մեռաւ, եւ ես մնացի միմակ, աս աշխարհիս վրայ օտար, բանտարկեալ, պաշարեալ բոլոր իր թշնամիներէն... իր թշնամիները թէ որ միմակ լինէի՞ն, բոլոր հայութեան թշնամիներէն. վասնզի ես թէ որ բանտէն կազատիմ այսօր, անշուշտ հայ մը չի գայ աշխարհքիս վրայ, որ հայուն անկախութիւնը եւ ազատութիւնը մտածէ: Միթէ՞ իմ պապերս, Ռուբէն Կոստանդին, հօրեղբայրս Թորոս եւ հայրս Լեւոն թէ որ ուզէին, թէ որ խնդրէին յունական արծուոյն սոթած թելերով տակ մտնել Լամբրոնական Օշիններու, շէթումներու պէս ուրանաղով հայութեան իրաւունքը, հայրենեաց եւ ազգութեան սէրը, միթէ՞ այս թուամորթ եւ քնէած կայսերք, որոնք անգործ ամբարտաւանութեան, վաւաշտտութեան եւ աստուածաբանական վարդապետութեանց ստուերներու տակ կը թաւալին, կը մերժէի՞ն գանոնք. քա՛ւ լիցի: Բայց անոնք արքայական արիւն ունէին երակներու մէջ, եւ աչն նշանաւոր օրը կը յիշէին՝ ուր հայ ժողովուրդը՝ սինոքորը, ռամիկը, շինականը, որ ազնուական չէր, որ ազատ չէր, որ եկեղեցական չէր՝ ոչ Վեստ Սարգսի պէս, ոչ հրաշագործ Գետադարձ կաթողիկոսին պէս, ոչ Կիրակոս Երեցի պէս, կ'երթար կը դիմէր առ Վահրամ, եւ անոր քաջութեան ընկերացած ջարդութեամբ փախստական ընելէն վերջ յունական բանակը, որ Անիի բան լիքները՝ մատնութեան նշան՝ ձեռքը կ'ուզար քաղաքը պահանջելու, եւ ետքը թողած զէնքերը՝ յուսահատ եւ լքեալ Աշտոններու, Սմբատներու, Գաւգիկներու գերեզմանաց վրայ վերջի եւ անյուսութեան արցունքը կը թափէր. ահա այդ ժողովրդեան սէրն էր, որ կ'ազգետրէր իմ պապերս եւ յունական ատելութեամբ եւ արդար վրէժխնդրութեամբ կ'ելնէին Տորոսի բարձանց վրայ կանգնելու ազատութեան դրօշակը, եւ ես այդ սիրտը ունիմ եւ կը զգամ, ե՛ս որ չէ թէ միայն իմ նախահարցս գաւակն եմ, այլ այս օտարախորթ հուլեաց գրականութեան, որ չեն գիտէր եւ չեն ճանչէր իրենց Լիգուրիկները, իրենց Լեւոնիտասները, իրենց Արիստիտները, այլ կը նսահն ժամերով եւ գրերով կը վիճեն, կը կռուին եւ կը հալածեն իրենց դաւանակից եղբայրքը կաթիլ մը ջուրի, հացի մը խմորի՝ անիմանալի բառի մը մեկնութեան համար: Խելագարներ, թէ որ աստուած տա իքնձ կատարել իմ փափագներս, ո՛հ, դիտեմ թէ ի՞նչ կ'ընեն, բայց յոյսերս մեծ, եւ վիճակս դժուարին. տեսնե՛նք...»:

Այս խորհրդածութեանս վրայ էր, երբ Բաբկէն ներս մտաւ: Իսկ Թորոս զինքը առանց խօսեցնելու միւս սենեակ տանելով հարցուց թէ ի՞նչ տեսաւ. եւ ինչպէս կ'երեւակայէր՝ բարձր պատերէ գատ բան մը չէր կրցած նշմարել: Ուստի առանց ժամանակ անցնելու իջան ընթրեալու, վասնզի արդէն ճաշու ժամանակը անցեր էր, եւ իրենք ամաւօտուրնէ մինչեւ երեկոյ դեռ բան չէին կրցեր ուտել: Բայց անօթութենէն աւելի հետաքրքիր էր Թորոս իմանալու թէ ի՞նչ էր կերակրոյ պատրաստութիւնը այս անսովոր տան մէջ՝ ուր դարանակալ ձեռք մը կը նշմարուէր կամ սրտի. կամ կենաց. ուստի իջաւ սեղանատուն եւ երբ ակնարկեց Բաբկէնին նստիլ սեղան իրեն հետ, երբ նա կը քաշուէր, «Բաբկէն հայրիկ, թէ որ պարագաները պահանջէն, ես քեզի կ'իմացնեմ թէ ե՞րբ ինձի սեղանակից պիտի չլինիս, իսկ ուրիշ ժամանակ մեր բանտի սովորութիւնը չենք փոխէր. եւ որոշ գիտցիր թէ ինձ աւելի ախորժելի է հօրս հաւատարմին եւ իմ տղայութեանս խնամածուին հետ անուշ հացն ու պանիրն ուտել՝ քան թագաւորաց շնորհեալ խորտիկներն օտարներու հետ վայելել», եւ նստան: Կերակուրներն ընտիր եւ համեղ էին առանց շոռայութեան, զինին ազնիւ էր եւ պտուղներն պատուական, Թորոս առանց բառ մը գրուցելու ելաւ սեղանէն, տան սպասատրը, որ կը ծառայէր, հարցուց ան ատեն թէ՛ «Ի՞նչ հրաման ունէր

երկրորդ օրուան կերակրին համար», իսկ Թորոս պարզութեամբ պատասխանեց. «Այսօրուան կերակուրը ով քեզի պատրաստել հրամայեց՝ ւանոր կը հարցնես»:

Եւ ինք քաշուեցաւ վերնայարկը. նախ Բաբկէնի ապսպրելով վարի հիւրի սենեակը անկողին մը տարածել եւ պառկելու եւ միշտ արթուն քնանալ. «Թեպէտ, հաւել ժպտելով, այդպիսի պատուէր մը աւելորդ էր այնպիսի մարդու մը համար, որ 12 տարեկան սկսած էր հօրեղբօրը եւ հօրը ամէն պատերազմաց գտնուիլ եւ խելամուտ էր թէ թշնամեաց բանակէ մը շրջապատեալ միշտ գգոյշ պէտք էր լինել»: Եւ առանց երկար խորհրդածութեան մտաւ անկողին եւ պառկեցաւ, իբրեւ թէ իր հայրենի Վահկայ բերդին տղայութեան ապահով սենեակը լինէր, եւ քունն թեպէտ քանի մը ժամ ուշացաւ վրայ հասնելու, բայց վերջապէս այնպիսի տարիքի մը մէջ՝ օրուան գանազան դիպուածներու պատճառած սրտայուզութիւնը յաղթեցին կամքին զօրութեան եւ քնացաւ. երբ արթնցաւ, ինչպէս տղայութեան սովորութիւնն էր, մէկէն ցատկեց անկողնէն եւ բնականաբար աչքը դարձուց խաբուսիկ դռան, որ անշար պատի մը կերպարանք կը պահէր, պատուհանը բացաւ եւ տեսաւ, որ Բաբկէն պարտէզին մէջ անխռով կը շրջագայէր. երիտասարդին ակնարկին վրայ վեր ելաւ, եւ առջի նայուածքը՝ հար եւ նման Թորոսի՝ խաբուսիկ դռանը եղաւ:

– Բաբկէն հայրիկ, – ըսաւ իշխանագունն, – ի՞նչ հետաքննին աչք կը նետես այդ պատին վրայ, ի՞նչ տեսար:

– Հիմա չէ որ տեսայ, – պատասխանեց Բաբկէն, – երէկ տեսայ ես այդ դաւը, բայց վտանգը իմ կարծածիս պէս չէլաւ:

– Ի՞նչ ըսել կ'ուզես:

– Ան կ'ուզեն ըսել թէ ես կարծէի, որ այդ դռնէն սուերաւոր թշնամի մը պիտի ելնէ, իրօք թշնամի մը եղաւ, բայց իմ կարծած տեսակես չէ:

– Ի՞նչ կ'ըսես, Բաբկէն, բան մը չեմ հասկնար:

– Դու ինձի ըսիր թէ «արթուն քնացիր», եւ ես արդէն միտքս դրած էի. բայց ի՞նչ օգուտ արթուն քնանալ վարի սենեակը անկողնի մը վրայ տարածեալ, ուստի պէտք էր այնպէս դիրք մ'առնէի, որ տան մէջի շարժումնքը տեսնէի եւ հայոց միակ յուսոյն վրայ հսկէի. ուստի երբ ամէն ձայն դադրեցաւ քաղքին մէջ՝ քիչ մ'ալ անկողին փոխեմք, ըսի, ելայ կամաց մը իջայ պարտէզ ու սօսի ծառէն յարմար անկողին մը չի գտնելով, անոր վրայ գետեղեցաւ եւ իրօք մինչեւ կ'էս-գիշեր ամէն տեղ լուռ էր եւ խաւար, բայց յանկարծ ու քու պատող տեսայ, որ ճեղքեցաւ, եւ տկար լուսոյ գիծ մը նկարուեցաւ. ձեռքս սա պահած թուրիս տարի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, ըսի, ինձի համբերութիւն տա...:

– Ի՞նչ. պիտի պոռայի՞ր:

– Աստուած չընէ՛. ճիղէն ներս պիտի ցատկէի, մենք մեր Սեւ լեռը լաւ կը ցատկենք, բայց միջոցը շատ էր, պատուհանը նեղ, անշշունջ ցատկելն անհնար, եկողը կրնար փախչիլ, մանաւանդ որ լոյսը տկար էր, ուրեմն՝ եկողը վախկոտ, ուրեմն՝ պէտք էր սպասել. եւ վայրկեանը տարի մը եղաւ, լուսոյ երկայն, վերեմ՝ վար գիծը սկսաւ շարժիլ, բայց անգգայի կերպով, եւ ահա գլուխ մը տեսայ. փառք քեզ, Լուսաւորիչ, ըսի, սուրը տեղը դրի. սաստանի գլուխը կը նկան մ'էր. բայց ի՞նչ կուզեր. մտիկ կ'ընէր, կուզեր իմանալ թէ դու իրօք քուն ե՞ս. երբ ապահով եղաւ, դուրը կատարեալ բացուեցաւ, քողարկած լուսով մը ի ձեռին մտաւ սենեակը, նախ գգուշութեամբ սենեակը գննեց, վերջը կամաց-կամաց մօտեցաւ դէպի քեզ, եւ երբ իր երեսը տեսայ, գիս դող առաւ...:

– Ինչո՞ւ, ի՞նչ կար երեսին վրայ, ի՞նչ էր:

– Լուսոյ պէս աղուոր էր. սաստանան երբ աղուոր է՝ ես շատ կը վախեմ, մանաւանդ հիմա, քեզ կը դիտէր, քու վրադ կ'աղօթէր, ես ալ կ'աղօթէի, որ այդ գեղեցիկ սաստանային ճանկէն Լուսաւորիչ քեզ ազատէ, քանի մը վայրկեան կեցաւ, եւ վերջը գիտես թէ մէկը գինք ցնցեց, առաւ իր լոյսը եւ ինչպէս անշշունջ մտաւ, նոյնպէս հալածեցաւ գնաց: Տեսիլն աներեւոյթ եղաւ:

– Այ՛ս էր բոլոր քու տեսիլքդ ու վախդ, Բաբկէն հայրիկ, – ըսաւ ծիծաղելով Թորոս:

– Այդ կինը թէ որ շատ աղուոր չըլլար, չէի վախեր:

– Կ'իմանամ, կը վախես, որ խելքս անոր կ'երթայ եւ մեր լեռները կը մոռնամ, այնպէս չէ՞:

– Այո՛, ստոյգ ալ աս է: Թէ որ այդ կինը աս քաղաքը ձգէ, քեզի հետ գա, իր նգով հաւատքը բողո, Լուսաւորչի հաւտա, մենք անիկայ մեր լեռներուն թագուի կ'ընենք. բայց հոռոմ կինը անիծած է. դու ալ մեր իշխանը՝ լաւ ես, խելօք ես, գիտուն ես, շատ կարդացող ես, վարդապետի չափ բան գիտես, բայց կնիկ, տեսած չունիս. վախեն, որ ինչպէս մեր հայու գրքերը սոռոցար ու վանքին բանտը հոռոմի գրքերը կը կարդայիր, մեր կնիկներն ալ չի սոռոնաս այդ հոռոմին կը նկան համար: Ես լուսահոգի հորդ կ'ըսէի. «Տէ՛ր, մեր Թորոս իշխանը լաւ է, բայց այդ նգոված ազգին գրքերը կը կարդայ, վախեն Լուսաւորչի հաւատքն սոռոնայ»: Նա ինձ կ'ըսէր.

«Բաբկէն, Թորոսն մի վախեր, նա ինձմէ խելօք՝ հորեղբօր պէս է, օր մը մեզ պիտի սոռոցնէ, մեզմէ քաջ, մեզմէ լաւ պիտի լինի. դու հոգ մ'ընէր, կը տեսնես»: Ե՛ս ալ անհոգ կը լինէի, բայց երբ կը տեսնէի Նարեկ բարձիթողի, ու որդնտած, փոշոտած հոռոմի գրքերը գաղտուկ կը բերէիր ու գիշերն ի լուռ կը կարդայիր՝ «Աստուած պահէ մեր իշխանիկը» կ'ըսէի: Հիմա տեսայ այդ կինը, իր դեղձան մագերը ոսկեկապ ձգած կը ոնկեն, որ ականջդ ի վար քեզ դիւթել կը ջանար, վախն առաւ գիս, աստուած քեզ պահէ, Լուսաւորիչ քեզ լոյս տա:

– Հոգ մ'ընէր, Բաբկէն հայրիկ, աստուած կը պահէ. իմ սիրտս քիչ մ'ապահովցաւ, ինչպէս հոռոմոց գրքերը գիս ապահով ըրին իրենց կրօնքին վտանգեն, իրենց կանայք ալ գնեց կ'ապահովեն իրենց արանց վտանգեն: Դու շատ լաւ ըրեր ես, այս գիշեր անկողինդ թոշոններէն փոխ առէր ես, ա՛լ ապահով կրնաս գիշերները քնանալ, վասնզի թշնամին քու կարծածիդ չափ գորաւոր չէ. ո՛յ գիտէ թէ նիգակակից մ'ալ չէ մեզի:

– Աստուած պահէ հոռոմի մը նիգակակցութենէն, – ըսաւ ծերուկն, երեսը խաչակնքելով, – հարցո՛ւ այդ փռանկներուն թէ ի՞նչ վաստակ ըրին ասոնց օգնութենէն, հոռոմը կը խոստանար անուշ-անուշ բարեկամութիւն, պաշար, առատութիւն, միւս կողմէ ձեռքի տակէ խոտերն ու արտերը կ'այրէր, ցորենն ու գարին ջուրը կը թափէր, գեղն ու քաղաք անապատ կ'ընէր, երբ մեր Կիլիկիա հասան քու պապուդ օրը, հայրս կը պատմէր, աստուած լուսաւորէ անոնց հոգին, ձի չէր մնացեր տակերնին, ճամփան ամենն ալ սատկած էին, մարդիկ ըսես հալումաշ եղած անօթութենէ, հիւնդութենէ, գիտես թէ բարակ ցաւի էին հանդիպէր, մենք կ'ըսէինք, որ ամենն կը մեռնին, ան քաջ պարոններ ու փոքրներն թէ որ մեր հայու հացն չուտէին՝ Երուսաղէմ չէին մտնէր, բայց նա, որ շատ խելօք մարդ էր, աստուծոյ սիրոյն համար ալ, իր սիրոյն համար ալ, անոնց թագաւորին գնաց, պէտքերնին լցուց. կերան, խմեցին, ութ օր չանցաւ, ամէն մէկը մեյմէկ ցուլ դարձան, ուժովացան, գնացին ամէն տեղ առին, Ս. գերեզմանն ալ ազատեցին, ի՛նչ օգուտ, սա փռանկները ուժով են, քաջ են, լաւ բազուկ ունին, բայց գլուխնին դատարկ է, խելք չունին, սա հոռոմք հակառակն են, ուժ չունին բայց շատ գիտեն, խորը կը տեսնեն, նայէ՛ ասոնց տերտերներու աչքին, դժոխքի ճրագ կը նմանի, գիտես թէ աստանան մէջը կը պլպլա: Ես աս գիշերվնէ ի վեր հոռոմ մարդկանցմէ աւելի կնիկներէն կը վախնամ:

– Փու՛ւ տեղ կը յոգնիս, Բաբկէն, – ըսաւ Թորոս լուրջ կերպով, – մենք հիմա քարէ, փայտէ բարեկամ մը չունինք, պէտք է որ պատրաստուինք աս անիծեալ քաղաքն փախչելու, ծոցերնիս ստակ մը չունինք, որ նաւու մը վարձք կարէնանք ընել, քու ըսածիդ պէս թէ որ խելօք լինինք եւ առիթ մը երբ պատահի անկից օգուտ քաղել չդիտանանք, մենք ալ քու փռանկներեղ ավիգի դատարկ գլուխ կը լինինք: Դու նայէ սա քաղաքս, այս օր պտոյտ մը ըրէ. տե՛ս, նայէ՛ հայ մը կը տեսնես թերեւս, ամէն հայու ականջ մի՛ դնէր, հայերէն խօսող ուրացեալ հայ կարելի է շատ գտնես, բայց սրտով հայ շատ քիչ կայ, մանաւանդ տերտերներէն զգուշացիր, անոնց լաւը սուրբ է, բայց գէշը աստանայեն ալ վատ է: Երբ իմ վրայ խօսք դառնա, գրուցէ՛ թէ ապուշին մէկն է, գրուցէ թէ միտքը բռնուած տարտամ մարդ մէ, հորը հիւանդութենէն վերջը փոխուեցաւ գրուցէ, ցաւի, ողբա իմ վրաս. իսկ թէ որ մարդ մը հանդիպիս, իրօք ճշմարիտ մարդ մը, քանի մը տեսութենէ վերջ ինձ իմաց տուր անունով, տեղով, անցեալով եւ յետոյ, երբ որ ուզեմ, ինձի կը բերես: Ահա քու ընելիքդ:

– Լաւ, – ըսաւ Բաբկէն, ելաւ երթալու:

Շատոնց էր՝ Լեւոնի մեռնելէն վերջը՝ այսչափ երկար խօսակցութիւն չէր ունեցեր իր երիտասարդ տիրոջ հետ, ուստի ուրախ էր սրտով, թէպէտ դէմքը ծիծաղի սովորութիւնը սոռոցեր էր: Եւ երբ դուրս կ'ելնէր, ձայնեց Թորոս.

- Բաբկէն հայրիկ, փող ունի՞ս:
- Մէկ փող չի կայ, բայց աստուած ողորմած է:
- Ինչպէ՞ս:
- Երբ ոտք չունէինք աստուած ոտք տուաւ, հիմա ալ ստակ վունինք, աստուած մեծ է, կ'ուտայ, դու հոգ մ'ընէր:

Գ Լ ՈՒ Խ Գ Խ Ն Ա Մ Ա Կ Ա Լ Ձ Ե Ռ Բ Ը

«Լաւ՛, – ըսաւ Թորոս ժպտելով, երբ Բաբկէն գնաց, – աղէկ գիտէ ծերուկն, որ ես ալ փող մը չունիմ. պատուական մարդ, աստուած իրեն յաջողութիւն տա. տեսնենք ինչպէ՛ս կը դառնա եւ երբ, վասնզի ան մարդկանց մին էր, որ պարսպ դառնալ չեն գիտէր: Ի՛նչ մտածութիւն՝ ծառին վրայեն հսկել իմ վրաս, եւ ի շնորհս Բաբկէնի իմացայ թէ ո՞վ է անձը, որ զիս կը խնամէ, թէ որ այդ խնամքը ծուղակ մը չէ. վանքի մը մէջ բանտարկեալ անձի մը սիրահարուիլ, ուսկի՞ց զիս տեսեր է, ո՞ր ճանչեր է. ահա չորս տարի է որ աշխարհքի հետ մեր ամէն յարաբերութիւնք կտրուած էին, սենեակ մը երկթէ վանդակներով մեզի կը ներէր կղզուոյն բարձրութենէն տեսնել ծովը շրջապատեալ, եւ խեղճ հայրս երկու հողի վրայ աչերը սեւեռեալ՝ կը նայէր հողը, որ Ռուբենի գերեզմանն էր, եւ որու քով ինք պիտի թաղուէր, եւ ծովէն անդին քիչ մը հեռուն Ասիոյ ծովափունքը, որոնց շարունակութիւնը կ'երթայ մինչեւ Կիլիկիա: Կիլիկիա, ուր երբեմն թէպէտ տղայ, կը յիշէի առյուծը, որ Տորոսի բարձանց վրայ կանգնած՝ կը դիտէ՝ ահա մեր սահմանը կ'ըսէր, որ աստուած որոշէր է. ահա սա լեռներուն գիծը եւ ծովու ալեաց փայլը թէ որ կարենայի՛նք հայութեամբ լեզնել այդ երկիրը, կը յիշեմ նաեւ այն օրը, որ նա դղեակը դարձաւ մեծ պատերազմէ մը՝ վերջը, ուր շարունակ ամիսով հորեղբօրս հետ մէկտեղ սկիւթացուոց ահագին բանակի մը արշաւանաց դէմ կը պատրաստուէին, ի՛նչ սոսկալի ամիս էր ան: Ես մօրս եւ եղբօրս հետ կ'ելնէինք մեր լեռանց վրայ այցելութեան ան խեղճ, ժողովրդեան, որ փախեր լցուէր էին կանանց, տղայոց եւ կենդանեաց բազմութեամբ ապաստարան գտնելու Տորոսի ժայռէնու վրայ, մարդիկ բոլոր զինեալ հորեղբօրս եւ հօրս հետ բարբարոսաց բանակը կը դիտէին, որ չբաւականանալով աւարաւ, գերութեամբ ու կործանմամբ՝ կ'այրէին, կը վառէին գիւղեր, աւաններ ու քաղաքներ, արհաւիրք եւ սարսափ պատած էր զամենքը, ամէն անհամբեր հորեղբօրմեա ակնածողք՝ հօրս աննկուն եւ յանդուգն քաշութիւնը գիտնալով իրեն կը դիմէին. «Մինչեւ ե՞րբ պիտի սպասենք, – կ'ըսէին, – դու ե՛լ, մենք ամէնքս քեզի հետ ենք, հա տանք, լնցանք, մինչեւ ե՞րբ սպասենք», – Իսկ Լեւոն, հայրս՝ «Տղա՛ք, խենթացա՛ք, – կ'ըսէր, – ես մեծ եղբօրս այսպիսի վտանգաւոր ժամանակ անհնագա՛նդ լինիմ, աստուած չընէ, ես լաւ կշռած եւ խելամուտ եղած եմ, որ առաքինի իշխան եւ հնուտ ու իմաստուն գորավար է նա, այսպէս ժամանակ խորհուրդ տալն անգամ յանցանք է. երբ ըսէ՛ պատերազմինք, պատերազմինք ու մեռնինք, բայց ան ատեն միայն»: Ետքը տեսանք, որ կը հատսնէին Տիգրան, Սալասաթ իրենց խում բերով, Գող Վասիլ իր աննկուն վաշտերով, եւ ահա լատինացի սպառազինաց փոքրիկ խումբ մ'ալ վրայ հասաւ, եւ պատերազմի փողը սկսաւ հնչել Վահկայ բերդին վրայեն, փողհարք լեռները կը հնչեցնէին, եւ ամէնքը գնացին: Ես ան ատեն տասը տարու էի, եւ Ռուբեն, որ ինձմէ երեք տարու մեծ էր, սուր մը ձեռքը եկաւ զիս գտաւ. «Քալէ՛, Թորոս, – ըսաւ, – մենք ալ երթանք պատերազմի, մենք կնիկ ե՞նք, որ հոս դղեակը նստինք»: Ես տարտամ կը մտածէի, վասնզի սուր չունէի, երբ մայրս վրայ հասաւ, երկուքնիս ալ զինեալ եւ անզէն բերդին աշտարակին մէջ բանտարկել տուաւ:

Օր մը հոն կ'եցանք, մէկ մ'ալ յաղթութեան ձայներ լսուեցան, մեր բանտին դռները բացուեցան. իրաւ, թէպէտ ամէն աչք սգոյ արցունք կուլային, բայց դարձեալ յաղթութեան ուրախութիւնը զամենքը զինովցուցեր էր. իսկ հայրս երբ տեսանք, շփոթեցանք, չէինք գիտէր ո՞րչէ էր թէ մեռած, վիրաւոր կարծեցինք եւ իմացանք թէ յոգնած էր եւ թէ յաղթութիւնը գրեթէ նորա քաջութեան սքանչիլիքն էր: Անկողնին մէջ պառկած օրերով՝ բոլոր գորագլուխները կ'ուզային զինքը փրկիչ կ'անուանէին, եւ հորեղբայրս նախ կը վկայէր աննախանձ թէ աստուծմէ վերջը Լեւոն Կիլիկիոյ ազատարարն էւ առիծն եղաւ: Ամէն օր կ'ուզար զինք տեսնելու: Ի՛նչ ուրախ օրեր անցան մինչեւ գերութեան օրերն, որ եկան. ոհ, մոռնամ այն օրերը եւ շիշեմ: Ներկային վրայ՝ այո՛, պէտք է մտածել, բայց ներկան անձանօթ ապագայ մը ունի. տեսնենք սա կինը անշուշտ ինձի պիտի երեւայ, եւ սա քօղը պիտի վերնայ. ինչ կը նշանակէ. թէ որ յոյները զիս սպաննել ուզէին՝ ի՛նչ դժուարութիւն կար իրենց համար. սպասենք ուրեմն»:

Սպասատրը եկաւ ճաշի հրաւիրելու. իշխանը, որ երբ իջաւ, տեսաւ, որ յարգանօք կ'ողջունէր զինքը առջի օրուան մարդը, որ տուն առաջնորդէր էր եւ բնակեցուցեր, դարձեալ իմացնելով թէ պատրաստ է ամէն հրամանները կատարել. իսկ Թորոս իր անհոգ եւ միամիտ ձեւը հագնելով, պատասխանեց թէ գոհ է եւ գանգատի նիւթ ամենեւին չունի: Ուստի ճաշը կատարելէն վերջը առանց երկար խօսակցութեան մտնելու այդ մատակարարին հետ, քաշուեցաւ դարձեալ վերի սենեակը՝ իմացնելով թէ քուն ունի:

Թէ որ Ալեքսանդրէ սկսեալ բոլոր երեւելի մարդիկ ծանր պարագաներու նախերգանաց մէջ կրցեր են քնանալ, պէտք չէ զարմանալ, յաջողութեան ապահովութիւնը միշտ յոգնած մտքի մը քուն կը պարգեւէ, այսպէս եղաւ նաեւ մեր Թորոսին, որ դարձեալ քունի թաղուեցաւ. բայց քուն մը, ուր իրեն կ'երեւար թէ գեղեցիկ, ոսկեթել մագերով կին մը թեթեւ քայլերով իբր ստուեր անկողնին շուրջը կը պտտի, ու քանի անգամ, որ ձեռքը իրեն կ'երկնցնէր՝ փախուստ կ'ուտար. աս խաղը շատ անգամ հանդիպելով վերջապէս աչքերը բացաւ եւ մարդ չի կար. աչքը խաբուսիկ դռանը դարձուց եւ տեսաւ կիսաբաց, թէպէտ կորովի, թէպէտ բնութենէն աներկիւղ, սաստիկ զարմացաւ տեսնելով, որ իր անշարժ սիրտը կը թնդար, կը բաբախէր եւ գօրութիւն մը զինք կը ձգէր, կը քաշէր դէպ այդ կիսաբաց դուռը. ուստի կանգնեցաւ զինովի մը պէս, դուռը սողաց, անհետ եղաւ իր մատանց դպելուն, եւ մտաւ նա նոր սենեակ մը, ուր լռութիւն եւ միայնութիւն կը տիրէր. քողարկեալ վարագոյրներով պատուհաններ լոյս կը նուազեցնէին, բազմոց մը եւ խորանի պէս թան մը կար մէկ կողմը, դէպի հոն դիւեց եւ հագիւ թէ քայլ մը առաւ, մնաց... Եղբօրը՝ Ռուբենին, կենդանի պատկերը պատին վրայ կախուած, գոյնզգոյն, թարմ ծաղիկներով պսակուած տեսաւ. աս տեսարանը մէկէն զինք փոխեց, սրտին փոթորիկը դադարեցաւ, ալեկոծութիւնը հանդարտեցաւ, եւ յորդառատ արցունքի հեղեղ մը երեսնիվար կը վազեր, ձեռքը՝ ճակատն ու մթնցած աչքերը կը գոցէին, արձան մը տխրութեան հոն կեցեր էր, երբ փափուկ, պզտի ձեռք մը՝ անուշ ձայն մը, որ իր անունը կ'ուտար, զինքն ի խորունկ քունէ արթնցուց. եւ երբ սողու մը պէս իր ձեռքը թոյլ տուաւ այն ձեռքին եւ աչքերը դարձուց անոր, որ զինք կը կոչէր, յիրաւի սքանչելի, ազնուական եւ լուրջ կերպարանք մը տեսաւ, պարզ՝ զգեստներուն, պարզ՝ զարդարանաց եւ պարզ իր գեղեցիկ հասակին համեմատութեան մէջ: Աչքերը իրեն յառեալ՝ «Բաւ է այդչափը, իմ սիրուն Թորոս, – ըսաւ, – արցունքը մեր կանանց իրաւունքն է, ձեր բաժինը վրէժն է. ես շատ գիշերներ անցուցեր եմ այդ պատկերին առջեւ արցունքով»: Իսկ Թորոս այդ ձիւնափայլ ձեռքը իր շրթանց տարաւ, ուզեց խօսիլ, չի կրցաւ, վասնզի արցունք եւ սրտի յուզմունք ձայնը խեղդէր էին. իր քաղցր խրատուն իբր գորովայի մայր՝ ձեռքն բռնած տարաւ բազմոցին վրայ քովը նստեցուց եւ բեհեզեայ թաշկինակաւ իր եւ անոր արցունքները կը սրբէր: Երկայն վայրկեաններ անցան եւ այս երկու տարբեր գեղեցկութեանց սքանչելիքն իբրեւ հին բարեկամներ ձեռք-ձեռքի, ծունկ-ծունկի, աչք-աչքի կիսանուաղ կը նայէին, մինչեւ աչքերը կենդանութիւն առին, եւ վերջապէս Թորոս կամաց ձայնով մը ըսաւ. «Չեմ գիտէր ով ես. բայց հրեշտակ մը չի կրնար ուրիշ կերպարանք մը ունենալ եւ ոչ ուրիշ ձայն մը, եւ ոչ այդ գորովայից խնամքը. զիս թշուառ պանդուխտս, հէգ բանտարկեալս, դժբախտ գերիս, ո՞ր տեսար, ինչո՞ր կարեկցեցար եւ ինչպէ՞ս սիրեցիր. աս պատկերին առջեւ չի հասած հանելուկը հանել անկարելի էր, բայց հիմա կարծեմ թէ կը խելամտիմ»:

– Այս էր իմ փափագս ալ, երկայն, սովորական եւ անհամ տարփական խաղեր ինձի սիրելի չեն: Ուստի նախ զիս, իմ անցեալս սուտի ճանչես: Իմ անունս Եւփիմէ է. իմ հայրս՝ Ալեքսիս, Փոքր Հայոց կուսակալ. երբ Մեքաստիա Հայոց թագաւորաց յանձնուեցաւ, Արծրունի իշխանի մը աղջկան հետ կ'ամուսնանայ, եւ Պոլիս դառնալէն տարիներէ վերջը ես կը ծնիմ. ես կ'արթնկէր տղայ միակ մխիթարութիւն կը մնամ մօրս, որ իր նոր ազգութեան հետ բոլորովին չէր կրցեր հաշտուիլ մինչեւ իր մեռած վայրկեանը, ուստի ես հագիւ չափահաս եղած Կոստանդին կայսրը զձեզ կալանաւոր բերաւ Կիլիկիայէ, մայրս առանց ձեզ ճանչելու անմխիթար էր ձեր անկման՝ համար. ընկերացեալ հօրս հին բարեկամաց՝ ամէն ջանք ի գործ դրաւ՝ առանց երբեք երեւալու, եւ յաջողեցաւ զձեզ բանտէն ազատել եւ արքունեաց դուռը նաեւ բանալ ձեզի. այն օրէն՝ եւ առջի տեսնուելուն զիս Ռուբենի հետ նշանելու միտք յայտնեց,

մանաւանդ որ տարեկից էինք: Բայց Ռուբենի սրտաբաց կերպը, գեղեցկութիւնը, բիզանդացի կանանց անբարոյական վրաձգողութիւնը, նորա ալ գուարճութեանը անյազ սէրը շօք մտաց հաստատութիւնը խախտեց, եւ դէռ մէկուն չի բացուած սկսաւ ջանալ գիս համոզել, որ այդ երիտասարդեն անցնիմ, քանի որ ապագայ դժբախտութիւն մը ակներեւ էր, բայց իմ սիրտս այդ պատճառաբանութեանց չէր կրնար համոզուիլ, նախանձը գիս կ'ուտէր, եւ անտարբեր կը ձեռագնէի ինքզինքս. պատերազմ կար ներսս, եւ մէկուն չէի կրնար բանալ. ուստի մօրս հնազանդելու համար ամէն ջանք ըրի, եւ Ռուբենի անունն՝ անգամ ալ բերնես չելաւ. մայրս կարծէր թէ մոռցեր էի, եւ ես Ռուբեն կ'երագէի: Չանագան անձանց հետ անուսնութեան առաջարկներ ըրաւ բայց ես միշտ կը հեռացնէի, մինչեւ որ ծանր հիւանդութեանը պատկեցայ, եւ բանդագուշանքս մօրս յայտնած էին գաղտնիքս, ուստի խեղճը բժշկին խորհրդով գիս Ռուբենի հետ անուսնացնելու ամէն ջանք ընելու խոստմունք ըրաւ, եւ հիւանդութիւնը նոյն վայրկենին բարեփոխութիւն ունեցաւ, եւ օրաուր ես առողջութեան մէջ հաստատուեցայ, գոյներս եկան. Ռուբենի հետ մէկ քանի տեսութիւն իր կեանքի ձեր փոխեցին, եւ Ռուբեն առանց՝ մեզի սպասելու առաջարկութիւն մը ըրաւ մօրս՝ հօրը հաւանութիւնն ընդունելու պայմանաւ: Մեր ուրախութիւնը՝ մանաւանդ մօրս ուրախութիւնը՝ անկարելի է պատմել. բայց ինչչա՛փ կարճ եղան ուրախութեան օրերը: Յանկարծ դժբախտ դիպուածին լուրը տարածուիցաւ, մայրս գիս մխիթարելու կը ջանար, երբ ինք ինձմէ աւելի հիւանդ էր, ես անկողին ինկայ, սաստիկ ջերմ մը գիս կը տանջէր. նոյն միջոցին մայրս ուրիշ սենեակ մը մեռէր էր: Պատաւ հօրաքոյր մը իմ վրաս կը հսկէր երկու տարի, եւ հօրս բարեկամ, ծեր եւ փորձ բժիշկ մը, որ հագի թէ ես քիչ մը շարժելու սկսայ՝ գիս հիւծեալ եւ մաշեալ՝ Իշխանաց կողին օդափոխութեան տանել հրամայեց, մեր բնակարան տունն ինք որոշելով. հոն հօրաքոյրս եւ ինք ինձի հետ միայն կը գբաղէին եւ կ'առնէին գիս մօտակայ վանքը կը տանէին մեծատրին, եւ բժիշկը կը նստեցնէր գիս պատուհանի մը առջեւ, բարի եւ սրամիտ ծերուն դիտատրութիւնը իմացայ այն օրը՝ երբ գրեց հօրդ հետ տեսայ, պարտէզին մէջ կը շրջագայէիք. Ռուբեն կենդանացած կարծեցի, եւ գետին պիտի գլորէի թէ որ արթուն ծերը, որ գիս աչքեն չէր կորցնէր, գիս չբռնէր. մարելուն հետեւանք տակալի ջղային ցնցումքներ եկան եւ այն օրէն կեանքը իմ երակներուս դարձաւ. գրեց երբեմն տեսնել նոյն պատուհանն իմ դեղս եղաւ. տեսայ դարձեալ գրեց հօրդ դագաղին ետեւն, երբ բանտեն գերեզմանատունը կը տանէին, երդում ըրի ան ատեն գրեց ազատելու համար ամէն ջանք ընել. տարի մը անօգուտ աշխատեցայ իմ պատուական բժշկիս հետ, եւ երբ Մանուէլ հօրը տեղն անցաւ, ալ ապահովեցայ, իսկ քու սրտիդ համար ամեննեւին երկբայութիւն չունիի. եւ այնպէս համոզուած էի թէ Ռուբենի այնչափ նման եղբայրը, որ գիս այնչափ սիրեց՝ անկարելի էր, որ անոր սրտին նման սիրտ չունենար, եւ թէ նորա յիշատակը մեր սրտերուն հանգոյց չլինէր:

– Այսպիսի ազնիւ սրտի, այդ հրաշագեղ կերպարանաց, այդչափ իմ ազատութեանս համար եղած ճգանց, եղո՛ւկ, դառնացեալ սրտէ մը գատ ոչինչ չունիմ, եւ այն կրնա՞յ բաւական փոխարէն համարուիր

– Ի՞նչ, – ըսաւ աղջիկը, եւ աչքերն այնպիսի լուսոյ նշոյլ մը փայլատակեցին այս հարցական թառին հետ, որ Թորոս զարմացաւ, – դու սի՞րտ մը միայն ունիս. չէ՛, Թորոս, դու այդ սրտիդ հաւասար ապագայ մ՛ալ ունիս, դու իշխանութեան ընդարձակ երկիր մ՛ալ ունիս եւ անոնք կը մոռնա՞ս. ես քու ձեռքիդ երբ փափագեցայ, քու իշխանութեանդ փառքին ալ մասնակցի փափագեցայ, ահա կը տեսնես, որ ես շատ ըստեմալ եմ եւ շատ փառասէր, մի՛ կարծէր գիս այն կանանցմէ, որոնց մտքին ընդարձակութիւնը իրենց սրակապանն անդին չի կրնար տարածուիլ, ո՛հ, չէ՛, ես քեզի ինչպէս Ռուբենին՝ իշխանական աթոռ մը կը փափագիմ, ես ձեր այս տոհմական կազմուածքին մէջ Պլուտարքոսի դիցագուններ կը տեսնեմ. ներէ՛, ես դէռ մօրս ազգին դիցագունքը չեմ ճանչեր, եւ կրնաս ապահով լինել, որ անխոնջ գործակից մը եւ ամենայն վտանգաց անվեհեր դիմագրաւ մը հիս պիտի գտնես: Դու ճանչցար հօրդ սուրը, զօր քեզի համար պարտատրեցայ զինարանն գողնալու հարիւրապատիկ իր գնոյն վճարելով (նիւթական գնոյն է խօսքս), եւ դու արժանի մնացիր գայն կրելու:

Թորոս առանց իմանալու բազմոցեն ծունկի վրայ եկեր էր աս հրաշագեղ մարգարեւոհուոյն առջեւ, իր բոլոր խոհեմութեան առաջադրութիւնները մէկդի դնելով, եւ երբ դադարեցաւ խօսքեն՝

– Քուկդ եմ, – ըրէ զիս ինչ որ կ'ուզես. դու փառասէր ես, կը սես, կ'ուզես թագուհի ըլլալ, եղի՛ր, միայն հայ եղիր, եւ առաջին սպասատրդ եւ խոնարհ ծառադ ես կը լինես, եւ բոլոր իմ ազգս քու հպատակդ կը լինի, միայն թէ օտարին գերութենէն ազատի:

Եւ աս խօսքերն ըսելով ձեռքերը կը պագնէր, իսկ նա, որ հանդարտէր էր, ելաւ վերցուց Թորոսը, եւ թելը մտնելով դէպի կեղծ դուռը գնաց, որ կիսաբաց մնացեր էր եւ երբ կուղէր մտնել ու Թորոս զինք կ'արգիլէր՝

«Մի՛ վախեր, – ըսաւ, – քու սպասատրքդ իմ միամիտներս են, մօրս ձեռքը մեծցած. դու ալ անշուշտ քու ծառայիդ վրայ ապահով ես, ուսկի՞ց կը վախես, մանաւանդ որ իրենց ապաստանած է, առանց քու կոչիդ, սանդուխին վեր չելնել: Կ'ուզես տեսնել անձամբ թէ բանի մը պէտք ունի՞ս, ի՞նչ կը պակսի քեզի»: Եւ այս ըսելով դարանները կը բանար, գորոցները կը գննէր եւ տեսնելով, որ բանի մը ձեռք դպուած դեռ չի կար՝ «Պէ՞տք է գրուցել, աւելցուց, որ ինչ որ իմս է, քուկդ է, ինչ որ հոս կայ, քու գործածութեանդ համար է, անշուշտ դու ստկի պէտք ունիս, եւ ապահով եմ, որ գորոցին բանալին դեռ դարձած չէ. հիմա որ մենք ալ իրարու ենք՝ կը յուսամ թէ իմս քուկդ է, քուկդ իմս է»:

– Քու աս խնամքդ; քու այսչափ երկար...

– Մի՛... – ըսաւ Օրիորդը, իր ձիւնափա՛յլ մատը Թորոսի շրթանց վրայ դնելով, ժպիտով մը, – միգուցէ ասկից վերջը շնորհակալութիւն բառը բերնեդ հանես, մեր մէջ առեւտուր մը կայ, չէ՞ մի, որ դու ինձի աս փոքրիկ տան փոխարէն արքայական աթոռ մը պիտի տաս, աս շորերուն փոխարէն ծիրանի, աս երկու ապուշ սպասատրաց փոխարէն ազգ մը հպատակ, թէ որ խաբուող մը կայ, ես չեմ, Թորոս:

Փոխանակ պատասխանի Թորոս ան սիրուն, ձեռքը համբոյրներով ծածկեց, երբ աղջիկը ցնցուելով մը՝ «Մենք չիմացանք ժամանակը. պէտք է երթան, – ըսաւ, – երբ զիս տեսնել ուզես, աս դարանին խորը սա օղակը քաշէ եւ ես կ'ուզամ»:

– Թէ որ ես չհամարձակիմ օղակը քաշելու:

– Ամէն համարձակութիւն ինձմէ՞ կը սպասես:

– Ես որ կարծէի թէ աշխարհիս վրայ բան մը չի կար, որ զիս շփոթէր եւ վախեցնէր, ինքզինքս փոխուած կը գտնեմ: Ես որ երեք կայսեր գահույից առջեւ սրտի տրոփ մը չունեցայ, ի՞նչ եղայ, չեմ գիտէր: Չիմա տղու մը պէս կը դողամ քու առջեւդ. ի՞նչ է աս:

– Աս կնշանակէ, որ դու դեռ տղայ ես, եւ պէտք է քու դաստիարակութեանդ վրայ հսկեմ ես: Այս երեկոյ ուրեմն կ'երակուրեն վերջը կը տեսնուինք, երբ ամենքը պատկին:

Եւ աս ըսելով ձեռքը տուաւ, որ պագնէ, եւ դռնէն անհետ եղաւ ու գնաց: Իսկ Թորոս մնաց հոն այն դռան առջեւ, փոխուած մարդ մը բոլորովին, սիրտը նոր, անձանօթ գուարթութեամբ մը զեղուն, եւ խաւար աշխարհք լուսատր եղած էր իրեն համար. երեկոյեան արեւուն վերջի ճառագայթները վճիտ ոսկեղէն էին, ծառերու եւ ծաղկանց կանաչը շատ աւելի գեղեցիկ էր, քան մէկ քանի ժամ առաջ, օդը առողջ եւ թեթեւ էր շնչելու, եւ վերջապէս երբ պատուհանէն վար նայելով տեսաւ զբաբկէն, այնչափ իրեն գեղեցիկ երեւցաւ իր փշոտ եւ հաստ յօնքերով եւ իր յիսուն բայց կորովի տարիներով, որ եթէ չամչնար, պիտի ցատկէր, իջնէր եւ համբուրէր:

Բայց ինքզինք զսպելով, ակնարկ ըթաւ, որ վեր գա:

ԳԼՈՒԽ Դ ԿԻԼԻԿԻՈՅ ՎԻՃԱԿԸ

Թեպետ գուարթութիւնը կը փայլէր Թորոսի բոլոր կերպաբանաց վրայ, թեպետ ամեն պատրաստութիւն ունէր խօսելու՝ քան լսելու, բայց Բաբկէնի լուրջ եւ տխուր կերպարանքը առժամայն ազդեցութիւն սը ըրին սրամիտ երիտասարդին վրայ, որ իր տարիքէն անհամեմատ վեր էր իր քսան տարիներուն մէջն ալ: Բաբկէն՝ թեպետ հագիւ թէ պարզ կարդայ եւ անունը ստորագրել միայն գիտէր, արտաքոյ կարգի խոհուն, անհամեմատ ուժով, տոկուն եւ անխոնջ պատերազմի մէջ, անդրդուելի, հաւատարիմ եւ նախանձայոյց ազգասէր մարդ մ'էր:

Թորոսի եւ Լեւոնի յաջողութեանց անթոյլ գործակից, եւ առաջինին պաշտող յիշատակին երկրապագու կրօնամուլ, միտքը դրած էր, որ եթէ Թորոս երկայն ապրէր, անտարակոյս Կիլիկիոյ անկախութիւնը ան ողորմելի վիճակը չէր ընկնէր. ուստի Լեւոն իրեն համար աննման քաջակորով երիտասարդ մ'էր, գուրկ ան խորագիտութենէն եւ նախատեսութենէն, որ իշխանի մը եւ գորավարի առաջին յատկութիւնքն են: Բայց որովհետեւ հաւատարմութեան մէջ անդրդուելի էր, խնդրեց Լեւոնի ծառայութեան մէջ մտնել եւ նորա գերութեան անբաժանելի ընկեր եղաւ. բանտին մէջ երկրորդական անձինք էին իրեն համար Լեւոն ալ, Ռուբեն ալ. ամենքը երկու եղբայր նման կը գտնէին իրարու, ինք Թորոսի եւ իր եղբօր մէջ անբաւ հեռաւորութիւն կը գտնէր: «Ռուբեն, – կ'ըսէր, – հօրը ճիշտ գաւակն է, ուժով, թեթեամիտ, քաջ մինչեւ ի յանդգնութիւն եւ ի հրաշագործութիւն ծանր վտանգի մէջ, որ կրնան զինք երբեմն ի յուսահատութիւն տանիլ, բայց պզտիկը, ո'հ իր գլուխը երբեք պիտի չի կորսնցնէ, իր հօրեղբօրը պէս պիտի լինի անյոյս վիճակներու մէջ՝ անխոռով եւ հնարագէտ»: Ուստի Թորոս իր հայրենասէր յոյսերուն գաւակն էր:

Ոչ Ռուբենի աշագրաւութիւնը եւ մահը եւ ոչ Լեւոնի վախճանը, որ զինք տխրեցուցեր եւ դառնացուցեր էին, կարելի էր բաղդատէք Թորոսի փոքրիկ մէկ հիւանդութեան հետ, ուր Բաբկէն ինքզինք կը մոռնար, ա'լ պարտաւորութիւնը չէր, որ անքուն կը հսկէր պատանոյն սնարին քով, այլ գորովագութ մօր մը աշալրջութիւնն էր. մինչեւ իր խոշոր եւ հաստ ձայնը դայլայլիկ սը առնուլ կը ձեւանար եւ կը փափկանար թէ որ կարելի ըլլար իր անհագին ձեռքերը նաեւ պիտի մանրանային, երբ դեղին սկահակը իրեն կ'երկնցնէր. այնչափ խնամք կը տանէր զինքը խնամելու եւ տածելու ժամանակ:

Ուստի, հիմա երբ տխուր ու դառն ներկայացաւ, Թորոս՝ «Ինչ կայ, Բաբկէն հայրիկ, ընքովներդ շատ խաւար կ'երեւան այսօր, – հարցուց, միթէ ամենեւին հայ սրտով մարդ մը չի կրցա'ր գտնել»:

– Երանի՛ թէ չի գտնէի. գէշ, իշխանիկս, գէ'շ:

– Ի'նչ գէշ, գրուցէ՛ գլուխդ երերցնելուդ, ո'ր է գէշութիւնը:

– Միտ դիր, իշխանիկս. ես հոսկից ելայ անձայր քաղքին մէջ բոլոր շուկաները պտտեցայ, մէկ կիլիկեցի հայ մը տեսնեաւ համար, որ կարէնամ լուր մը առնուլ թէ մեր լեռները, մեր տղաքը ի'նչ եղան. իրիկուն եղաւ, ալ յոյսս կտրէր էր, մեյ մ'ալ մէկը զիս դրդեց կամաց ձայնովի «Բաբկէն եղբայր», ձայնեց. գլուխս վերուցի, նայիմ՝ երկայն հասակով մէկը, բեռնակրի հագուստներով, չի ճանչցի.

«Մի՛ խօսիր, – ըսաւ, – միայն ետեւես եկու, ես ալ զքեզ կ'ուզէի տեսնել»: Ո՛վ էր, չգիտէի, ան քիչ մը առջեւն, ես ալ անոր հետեւելով շարունակեցինք ճամփան՝ մինչեւ խղճուկ իջեան մը հասանք, եւ սենեակ մը բացաւ: Երբ դուրը գոցեց «Չիս չի ճանչցի՞ ր», հարցուց. «Չէ» ըսի: «Բարի նշան, թէ որ դու ալ զիս չի ճանչցիր, ուրեմն սատանան ալ զիս չի կրնար ճանչել: Վահկեցի Կոստանդինը չե՞ս ճանչեր»: Իրօք Վահկեցի բերդակալն էր, եւ սկսաւ ինձի պատմել թէ ինչպէ՞ս բերդին անձնատուր լինելն վերջը, բունէր էին զինք հոռոմք ու շղթայակապ նաւունը մէջ դրած Պոլիս կը դրկէին, եւ թէ ինչպէ՞ս շղթաները կտրելով նաւաստիներն ու պահապանները սպաննէր եւ նաւը Մելեկիոյ ծովեզրը կրցեր էր խրել եւ անկից Տորոսի ծովեզրեայ ժայռերուն եւ մացառներուն մէջն՝ գիշեր-ցերեկ, շատ անգամ անօթի, ծարաւ՝ քանի մը ձիթուն, քանի մը եղջիր միայն ուտելով, վերջապէս Մեւ լեռ գտեր էր, եւ թէ ինչպէ՞ս

հոռոմները ամեն տեղ գներ հայրերը կը հալածէին, կը չարչարէին, եւ թէ ամենքը կը մրմռային, եւ թէ ան մեր անպիտան ազգուրաց Լամբրոնի իշխան-ները՝ անհոգ, անկարեկիր էին անոնց նեղութեանց, որովհետեւ իրենք իրենց առ կայսր հաւատարմութեան վարձք առած էին պատիւ եւ իշխանութիւն: Իսկ Մամեստեայ հոռոմ կուսակալը՝ ամեն օր գհայն ու իր հաւատքը կը հայեոյէր, եւ ամենքը առտուծմէ Լեւոնի տղոց մէկուն հասնելուն կը սպասէին, որ գէնքի վագեն: Ուստի Կոստանդին հարցուցեր էր թէ ո՞ր են Մլեհ եւ Ստեփանէ. եւ ինացեր էր թէ Չալէպու Նորբետտին ամիրային ծառայութեան մէջ մտած էին. ելեր գնացեր էր գանոնք գտնելու, եւ հագիւ թէ Ստեփանէ համոզուէր էր Կոստանդինի հետ Կիլիկիա դառնալու, Մլեհ վրայ հասնելով, ոչ թէ միայն իր եղբօրը միտքը շրջելու՝ այլեւ գկոստանդին մատնելու երդում ըրած էր, եթէ նոյն օրը տաճկին հողերեն դուրս չելնէր:

Կոստանդին ալ յոյսը տրած եկեր էր Պոլիս, որ թէ կարելի է մեր կողմույն բանտը կոխէ, հայրդ ու գրեզ ազատէ եւ տանի Կիլիկիա կամ մեռնի. ուստի գրեզ կուզէ հիմա տեսնել:

Իսկ Թորոս աւ պատմութիւնը մտիկ ընելէն վերջը առանց պատասխան մը տալու եղաւ եւ մտախոհ՝ սենեկին մէջ վեր-վար կը շրջագայէր՝ երբ Բաբկէն արձանի պէս անշարժ կեցեր էր. վերջապէս Թորոս դառն ժպիտով մը՝

– Բաբկէն հայրիկ, – ըսաւ, – շատ կ'ուզէի Կոստանդինը տեսնել, վասնզի կ'երեւակայեմ թէ ինչչափ, որ շատախօս է, նոյնչափ եւ աւելի ալ քաջ է, բայց այս անիծեալ կառավարութիւնը, որ աւագակներու, գողեր ու համար ինչչափ անփոյթ է, այնչափ արթուն է մեզի պէս գերիներու համար, ո՛վ գիտէ թէ Կ'ոստանդինի հոս գտնուիլը ուստիկանութեան լրտեսները չեն գիտէր, եւ արդէն կամաւ թողած են, որ պատիւ եւ տեսած ու տեսնուած մարդիկը նշանակեն: Քանի որ Մլեհ այդչափ անարգ սիրտ մը ունի, եւ Ստեփանէ այդչափ հողդողդ է, քանի որ Լամբրոնի իշխանքը հոռոմոց գերութենէն չեն ձանձրացեր, եւ պէտք է իմ ազգիս գլխուն ճարը տեսնեն. գրուցէ Կոստանդինին, որ գիտ տեսնել անօգուտ է, թող գիտ Մեւ լեռը սպասէ: Այսչափ տարի համբերեց, շատ-շատ՝ տարի մ'ալ համբերէ: Ի՛նչ տեղեկութիւն, որ բերէր է՝ ինձի բաւական է: Բայց չի հարցուցի՞ր թէ ինչ միջոց, քանի հոգի ունի եղեր, որ աւ մայրաքաղաքին դռան առջեւ կը դգիի մը բանտ մը կոխելու յանդգնութիւնը ունեցեր է:

– Քիչ մը դրամական օգնութիւն գտնելով քանի մը եկեղեցականներէ, գենովացի նաւ մը վարձեր է, հինգ ալ ընկեր գտեր է իրեն պէս անվեհեր մարդիկ եւ աւ խորհուրդը մտածէր է:

– Բայց դու ի՞նչ ըսիր, Բաբկէն, աւ մեր Կոստանդինին մտածութեանը:

– Ըսի թէ յիմարութիւն է, եւ բարեբախտութիւն մ'է, որ արդէն բանտին դուռը բացուած լինելով իրենց քաշութեան կարօտութիւն չէ մնացած, որ Կիլիկիոյ միմիայն յուսոյն թերեւ անօգուտ մահը պիտի պատճառէր: Ուստի չե՞ս ուզէր իրեն գալը գրեզի հետ տեսութեան:

– Չեմ ուզէր, որ այսպիսի քաջ մարդիկ հուսակտուր լինին, ուստի դու կրնաս խոհեմաբար գիտ տեսնելու անօգուտ եւ վնասակար հետեւանքը ինացնել:

– Արդէն գրեթէ ինացուցի, եւ ինք շատ տխրեցաւ, վերջին պատասխանի մը կսպասէ վաղը շուկայի մեծ դռան առջեւ:

– Ահա, վերջին պատասխանն ալ դարձեալ աւ պիտի լինի: Երթալ եւ մեր լեռներուն մէջ ինձի սպասել:

– Այսչափ: Ուրի՞շ:

– Կ'երեւայ թէ ուրիշ մտածութիւն մ'ալ դու ունիս, Բաբկէն հայրիկ:

– Այո՛, ունիմ:

– Չրուցէ՛ ուրեմն:

– Կը հրամայե՞ս, որ գրուցեն: Ի՞նչ կարգիլէ, որ մենք ալ Կ'ոստանդինի պատրաստ նաւով դառնանք Կիլիկիա. կարելի չէ՞, որ Կոստանդին հագիւ հասած դեռ մարդ իր գալուն հոտը շառած, մտնենք իրեն հետ նաւը եւ շուտով ճամփայ ելնենք:

Եւ այս խօսքերը ըսելուն՝ Բաբկէն իր երկայն ընթրիներուն տակէն իր սուր աչքերը Թորոսի բիբերուն վրայ տնկած պատասխանի մը կը սպասէր: Այդ նայումը եւ նորա նշանակութիւնը միայն Թորոս կրնար իմանալ, ուստի անխոռով պատասխանեց, ոչ թէ Բաբկէնի մտքին, այլ սրտին խօսելով:

– Մենք մեր բանտեն ելնելուն երկրորդ օրը թէ որ այս բնակարանը թողունք եւ փախինք, կարելի է, որ կարենանք ողջ-առողջ Կիլիկիա հասնիլ, միթէ բոլոր յունաց սրընթաց նաւերը մեր ետեւեն չե՞ն սրանար, միթէ ան կառավարութիւնը, որ Լեւոնի մահուրնեն գրեթէ տարի մը վերջը իր ապուշ տղան բանտեն ազատելու համար այնչափ բարեխնամ աղաչանաց խուլ եղաւ, եւ հագիւ շնորհք մը ընելու գիջաւ, կը յուսա՞ս թէ գաղտնի մեր վրայ չի հսկեր եւ մեր առաջին անխոհեմութեան անյուշ բանտի գնեց չի դատապարտէր: Ես ալ կը սիրեմ ազատութիւն, ես ալ կը յիշեմ մեր լեռներուն պայծառ արեւը, երեկոյեան գով քամին եւ անջինջ երկնքին պարգոթիւնը, եւ բան մը չի կայ, աս լաւ լա՛ւ, Բաբկէն, բան մը, որ կարենայ գիս իմ պարտքես, իմ առաջադրութենես կասեցնել, բայց ուխտ ալ ունիմ, որ հախտուն բան մը չընեմ:

Աս վերջին խօսքերը, որ Բաբկէնի ճակատը պարզեցին եւ յօնքերը իրենց բուն տեղը տեղաւորեցին, դեռ իր վստահութիւնը ամբողջ չի կրցան գրաւել, եւ Թորոս լուռ կը նշմարէր, ուստի իբրեւ թէ նորա մտաք խորունկը չի թափանցած՝ քանի մը պտոյտ ընելէ վերջ, սենեկին մէջ, ըսաւ.

– Ես քեզի ուրիշ գաղտնիք մը պիտի հաղորդէի, աս գոան գաղտնիքը, որ պարզուեցաւ: Օրիորդը, որ դու նախ տեսար, որո՞ւ թերեւս միայն պարտական ենք մեր ազատութիւնը, հայ է մօր կողմէ եւ սրտով բոլորովին:

– Փա՛ռք աստուծոյ:

– Այդ կողմեն ալ սիրտդ հանգիստ բռնէ. առ սա քանի մը ոսկին, անցիր դիմացի կողմը Ղալաթիոյ քաղաքը, հոն հայոց եկեղեցի ալ կայ նայէ՛, տեսնուէ՛ ազգայնոց հետ, ի՞նչ վիճակի մէջ են, իմացիր, թէ որ առանց կասկածի ստուեր տալու կրնաս իմանալ թէ գենուացի նաւեր կան, որ ոչ Միջերկրական միայն՝ այլ նաև. Պոնտոսի ծով կ'երթան, տեղեկութիւն ա՛ն, ամէն ճամփայ լաւ է Կիլիկիա մտնելու համար: Ամենեն ապահով տեղ տեսնուելու համար՝ հայ եկեղեցին կրնայ լինիլ. բայց այդ նաեւ ինձի համար արգիլուած է, թերեւս, ինձի համար աս բանտը չեմ գիտէր առաջինեն որչափ ընդարձակ է: Տեսնենք... Դու խոհեմութիւն ունիս, պէտք չէ որ ես քեզի կը կրկնեմ թէ ինչ վիճակի մէջ ալ լինիս, պէտք է ջանաս իմանար բայց միշտ առանց հարցնելու: Ժամանակը արդէն ուշ է, դու ալ յոգնած ու անօթի, երթանք կերակուրի:

Թէպէտ Բաբկէն իրօք անօթի էր, բայց կար բան մը, որ դեռ իրեն համար վարագորեալ էր մասամբ, այսինքն՝ աղջիկը, որ «մօր կողմէ հայ էր եւ որ իրենց ազատութեան համար աշխատէր էր». եւ քանի որ մանրամասն պատճառները չէր իմացեր, իր ախորժակը կատարեալ չէր. բայց որպէսզի Թորոսի կամաց դէմ չի մեղանչէ, որ աններելի յանցանք կը համարէր, ամէն կերակուրներէն կշտապինդ կերաւ, Կիզիկոնի վճիտ գինին լաւ մը խմեց, եւ երբ Թորոս ելաւ քաշուեցաւ իր սենեակը, իր լայն յօնքերը վեր առնելով եւ իր սուր աչքերը գոհութեան ժպիտով մը անոր յետոց վրայ դարձնելով «Աստուած յաջողութիւն տա, իշխանիկս», կը մոռար քթին տակեն, «Դու շատ խելօք տղայ ես, որ աղջիկ մը խելքդ հափափէ ու քեզ կնիկ դարձնէ, ալ ես այս գիշեր հանգիստ կրնամ քնանալ. դու գուարճացիր ինչչափ կ'ուզես, բաւական է, որ տարին չանցած աս նգովուած քաղքին պարիսպներէն մէկ մը դուրս նետուինք...: Մեր լեռները հարցուցի, մեր ազգին ընդհանուր վիճակը հարցուցի... իմիններս անչցայ հարցնելու՝ վախեցայ հարցնելու... ո՞վ գիտէ, ի՞նչ եղան, ո՞րջ են, մեռա՞ծ են, ո՞ր են... իրաւ է որ անոնք հարցնելու ժամանակ ալ չի կար, անշուշտ ան ալ չէր գիտեր... Լաւ տղայ է Կոստանդին, քաշ է, ի՛նչ օգուտ, որ թեթեւ է. ո՛վ գիտէ Մլեհի՞ն էր յանցանքը թէ իրեն...»:

Այս մտածութիւններով սկսաւ նրափել Բաբկէն հայրիկ իր նստած տեղը, եւ իրօք ալ իրեն ան նրափը իր տղայութենէն ի վեր ամէնուն քունին տեղ կը բռնէր, եւ որ իրեն համար բաւական էր քսանչորս ժամ պատերազմելու եւ քառասունութ ժամ քալելու:

ԳԼՈՒԽ Ե ԴԻՈՆԻՍ

Այս փոքրիկ տան անմիջապես կից տունն մը կար, որու մէկ սենեակը միայն տեսանք մենք՝ սենեակ կամ մատուռ աղջկան մը սիրոյն, որ գաղտնիք մ'էր ամենուէն համար բացի ծեր Գիոնիսէն, որ աս որք աղջկան ոչ միայն բժիշկ, այլեւ խնամակալ, խորհրդական, սրտակից վարժապետ եւ հայր եղած էր միանգամայն:

Դիոնիս տկար եւ նիհար մարմնոյ մէջ կորովի սիրայ ունէր եւ մեծահանճար գլուխ մը, ի բաց առեալ իր արհեստը, որ զինք ուսմանց եւ գիտութեանց տարեր էր ի տղայ տիոց, իր գանազան ճամփորդութիւնքը ի Փոքր Ասիա, յարաբիայ, հեգիպտոս եւ հասորեստան իր միտքը ընդարձակեր եւ հարստացուցեր էին, եւ դիտող ու հետաքննին բնութենէն ամէն գաղտնեաց պատճառը փնտրելով, սոռոցեր եւ թերեւս արհամարհէր էր սրտի զգացմունքները: Եւ վերջապէս, երբ յոգնած եւ տկարացած երկար եւ բազմամեայ պանդխտութիւններէն Բիւզանդիոն դարձեր էր, իբրեւ թէ յանկարծ աչքերը բացուէր էին տեսնելու եւ իմանալու թէ ժամանակը անցէր էր. ուստի փիլիսոփայաբար որոշէր էր իր միայնութիւնը ուսմամբ մխիթարել, եւ իր արհեստին պատճառաւ Ալեքսիսի՝ Եւփիմէի հօր հետ վերաբերութիւն ունենալով քիչ-քիչ անոր բարեկամաբար եւ եղբայրաբար կապուեցաւ, անոր ընդարձակ պալատին մէջ իր սենեակները ունեցաւ, եւ առանց զգալու ան մարդը, որ կարծէր թէ ընտանեաց սէր, գաւկի սէր իր սիրտը մուտք պիտի չունենային, իր սիրտը գորովալից գտաւ անոնց ամէնուն համար, որ Ալեքսիսի էին. անոր կինը իր քոյրն էր, անոր որդիքը իր ալ հարազատ զաւկներ եզան, եւ ազատ սիրտ ունեցող կարծեցողն օր մը տեսաւ թէ իր խեղճ սիրտն ալ գերի էր տողոց ճշերուն, խնդալուն, տխրութեանց եւ ուրախութեանց, եւ ինքնաբերաբար քարոզ եւ դաստիարակ եղած էր անոնց բարոյականին, ինչպէս բժիշկ եւ խնամածու էր անոնց կենսականին: Իր աս պարտաւորութիւնները կրկնապատկեցան, երբ Ալեքսիս իր մահուան անկողնին մէջ ծեր բարեկամին յանձնէր իր ընտանիքը: Այլ ան օրէն վերջը Դիոնիս տան հայրը եղաւ, եւ տեսանք թէ ինչպէ՛ս ոչ միայն անոնց պիտուից այլ նաեւ անոնց ամէն քնոյշներուն կը ծառայէր, եւ Եւփիմէ իր ազնիւ բնավորութեամբն ու կարեկից սրտովն բռնաւոր մ'էր խեղճ ծերուն գլխուն, որ նորա կամաց հակառակիլ չէր գիտէր, եւ անձնասէր ծերութիւնը ժամանակ չէր գտնէր իր բերմանն հետեւելու: Ուստի ինչ որ Եւփիմէ կուգեր, Դիոնիս կը կատարէր. եւ որովհետեւ իր արհեստին եւ ուսմանց համար մեծ համբաւ ունէր եւ ծանր պարագաներու մէջ կը փնտրուէր թէ կայսերական եւ թէ մեծատոհմ ընտանիքներէ եւ ամէնքը զինք կը յարգէին, ուստի կրցեր էր յաշտոյի իւր ազդեցութեամբս ու խնդրանք գներ Թորոսն ալ բանտէն ազատել, եւ այդ տան մէջ, որ անյայտ մաս մ'էր Եւփիմէի պալատին՝ տեղաւորել:

Այս ընդարձակ բնակարանին նկարագիրն ընել աւելորդ է: Ժամանակին շոայլութիւնը ինչ-որ սովորութիւն ըրած էր զարդարելու համար մեծամեծաց պալատները, ընդարձակ ոսկեճեղուն սրահներ եւ սենեակներ պատկերներով, գորգերով, բազմոցներով հոն աւելիով կը գտնուէին եւ բնական է, որ տարիներով ընդարձակ գաւառի մը կուսակալ իր կողոպտուները մայրաքաղաքին մէջ վայելէ: Ուստի Ալեքսիս Օերակոյտի անդամ անուանեալ եւ իր քաղցր բնավորութեան համար կայսեր սիրելի՝ տանը շքեղութիւնն ու պերճանքը մեծ պարտաւորութիւն կը համարէր, մանաւանդ որ իր հայ թագաւորագն կինը ամէն բանէ աւելի գոհ ընել կուգեր, վասնզի սաստիկ կը սիրէր, եւ նորա մաղձոտ եւ տխուր վայրկեններէն կ'ականածէր, որ առանց զանգատ մը յայտնելու, հայրենի երկրին յիշատակին՝ աչքի փայլ մը կ'ունենար, եւ հռանդեամբ՝ իրաւ շատ քիչ անգամ՝ իր տղայութեան ձիարշաւները՝ եւ խազերը տարեկից աղջկանց հետ կը յիշէր:

Եւ աս կինը թէպէտ բուն հայրենիքէն վտարանդի, վասնզի իր պապը՝ Սենեքերիմ, թողէր էր Վասպուրական աշխարհք եւ եկեր էր բնակելու Սեբաստիա, բայց դարձեալ հին հայրենեաց յիշատակներով սնեալ՝ ինչչափ հեռացել էր, նոյնչափ ալ անոր վրայ սէր ունէր. ուստի իր էրիկը միշտ տխրութեամբ կ'ուտար իրեն հին շայաստանի ցանցառ նամակները, որ երբեմն-երբեմն իրեն տեղեկութիւն կը բերէին նորա թշուառութեանց:

Ուստի իրեն մխիթարութիւն միայն Կիլիկիոյ Ռուբինեանց յաջողութիւնքն էին, եւ ինչ որ անոնց յառաջադիմութեան համար կը խօսուէր՝ զինքը գաղտնի ուրախութեամբ կը լեցնէին, եւ Ալեքսիս Թորոսի եւ Լեւոնի քաջագործութեանց լուրերը ինք կը բերէր կատակով եւ միշտ կ'աւելցնէր. «Մեզի համար անհաճոյ, եւ քեզի շատ հաճոյ լուրեր կան դարձեալ»: Իսկ երբ Լեւոն իր գաւակներով գերի բերուեցաւ մեծ քաղաքը, այս կիներ սրտի սուգ առաւ եւ կրցած օգնութիւնը ըրաւ եռանդագին, ինչպէս վերը յիշեցինք: Եւ երբ ինքն ալ մեռաւ՝ Եւփիմէ մնաց միմիայն ժառանգ հայրենի ստացուածոց եւ մայրենի հայասիրութեան: Թէպէտ իր սէրը աւելի հետեւանք կրնար համարուիլ ուրիշ դժբախտ սիրոյ, ինչպէս երբեմն կը յայտնէր Դիոնիս փոքրիկ ժպիտով մը առանց վիրաւորելու իր սանուհին, որ անտարակոյս ոյցէ՛ կատակի կրնար համբերել, երբ ան մարդեն կ'ուզար. եւ աններելի կը համարէր այնպիսի գաւեշտի ստուեր մը նաեւ թէ ուրիշը համարձակէր յանդգնէր: Վասնզի այդ չքնաղ եւ արքունի կերպարանքին փափութեան եւ մտաւորական սրամտութեան ներքեւ բուռն եւ խորոյստ բնատրութիւն մը կար, որ կարելի էր կոտորել եւ փշրել, բայց ոչ երբեք ծոնել եւ հակել. եւ ծերուն բոլոր խրատները ու հայրական յորդորները անօգուտ կը լինէին, երբ իր լուսալիւր աչքերը հրալիւր կը դառնային շանթահարելու համար իր կամաց ընդդիմահարները: Բայց ժամանակը եւ բախտին խիստ հարուածները, որ իր երիտասարդ տարիքին վրայ բռնացան, սկսած էին զինք համոզել իր խնամակալին խորհուրդներուն շանալ զիջանիլ, եւ աւելիդ խոհեմութիւն ունենալ մեր այս պատմութեան օրերուն: Ուստի երբ Եւփիմէ անմիտ, յամառ եւ անիրաւ վիճաբանի մը կը պատահէր եւ կը զգար հրալից ամպը, որ ճակտին վրայ կը դիգուէր, կը լռէր եւ իր դաստիարակին ժպիտ մ'արձակելով կ'առնէր կը քալէր, եւ հանդարտութիւնը հասնելէն վերջը դարձեալ կ'ուզար ի կոնի, բայց ալ զէնքերը փոխուած էին, իր սուր միտքը փոխանակ շանթերու՝ թունաւոր նետեր կ'արձակէր, հեզութիւն եւ երգիծանք կը սրանային իր շրթունքներէն: Եւ դարձեալ այս ամէն բնատրութեան խստութեամբ ալ թէ որ կանայք փախչէին իսկ իր ընկերութենէն, Էրիկ մարդիկ գիտնալով ալ թէ անխոց պիտի չելնեն իր պալատեն՝ դարձեալ կը վազէին փափագով իր տեսութեան: Այսչափ զօրաւոր են կը նկան մը գեղեցկութեան հրապոյրքը:

Ուստի նոյն զարնան երեկոյին, Բիւզանդիոնի վճիտ երկնքին լիալիւր լուսնով մը, նստած էին Եւփիմեայ մեծ սրահին յարակից կախադանատր կիտրոն եւ պարտիզին մէջ քանի մը հիւրեր Օրիորդին բազմոցին շուրջը: Իսկ նա իրենց սիրաշունչ շողոքորթութեանց այնպիսի ժպիտներով կը պատասխանէր, որ անկարելի էր որոշել թէ հաճոյի՞ց էին արգասիք եթէ արհամարհանաց: Վերջապէս երիտասարդ մը, որու սնապարծութիւնը հագուստներէն կը վազեր, որու պշրանքը հոգուոյն նուաստութեան հայելին էր, սրտնեղութեամբ ոտք ելաւ եւ կիսով գլովսը դէպ Օրիորդը դարձնելով

– Չարմանք է, – ըսաւ, – որ Կոմնենոսի մը նաեւ ձեր գեղեցկութիւնը անուշ բառ մը չունի պատասխանելու, արքայագուն մը ինձի պէս, որ կայսերական պատուանդաններուն վրայ է իր ծննդեամբ, թերեւս շատ նուաստացաւ հաճոյանալու համար ձեզի:

Եւփիմէի առաջին շարժումնքը նետի հարուած մը ընդունող առիւծին էր, եւ հագիւ թէ իր գեղեցիկ ճակատը ցնցեց եւ աչքերը փայլակեցին, միտքը եկաւ թէ իր բախտը իրեն կը սպասէր եւ ինք երջանիկ էր, ուստի ելաւ հանդարտ ձեռով՝

– Ներէ, արքայագն իշխան, թէ որ ես անզգայ կը գտնվիմ ձեր կատարելութեանց, որոնց բարձրութիւնը մէկը չի կրնար ուրանալ. ուստի ձերն է յանցանքը թէ որ ձեզի հաւասարները չի փնտրեցիք:

Եւ այս խօսքերը ազնուական ծանրութեամբ մը գրուցելէն վերջը՝ նոյնպէս զամենքը ողջունելով, գլուխը բարձր՝ թագուիտոյ մը պէս իր սենեակները քաշուեցաւ, ուրախ, որ դիւրութեամբ ազատեցաւ ընկերութենէ մը, որ զինքը կը ձանձրացնէր, ուրախ գտնելու համար ան ընկերութիւնը, որուն համար սիրտը կը տրոփէր:

Իսկ նոքա, որ մնացին՝ մեղադրեցին Իսաք Կոմնենոս, որ այնպիսի նախատանք եւ կոպտութեամբ վարուեցան գեղեցիկ Օրիորդին հետ, եւ դրկեց զիրենք անոր ընկերութենէն: Իսկ Դիոնիս որ անշշունջ կը դիտէր աս ամէն եղածները, զիրենք ամէնն ալ ճամփայ դնելէն

վերջը, ուղղունցաւ գտնելու իր սանուհին, որ իրեն կը սպասէր եւ որ զինք տեսածին պէս, մէկէն դիմաւորելով «ի՞նչ է կարելոր գրուցելիքդ», ըսաւ:

– Իմ գրուցելիքս հարցմունք մ'է, ի՞նչ է քու միտքդ հայ երիտասարդին համար:

– Այս հարցմունքդ զիս կը զարմացնէ, դու լաւ գիտես իմ միտքս:

– Անոր միտքն ի՞նչ է:

– Անշուշտ իմ միտքս ինչ որ է՝ անորն ալ նոյնը պէտք է ըլլա:

– Խնդրեմ ուրեմն ես ալ մէկ մը տեսնվիմ իրեն հետ եւ իր բերն են լսեմ եւ ըստ այնմ շարժիմ:

– Վտանգ մը կա՞յ արդեօք, շուտ մը ինձի գրուցէ:

– Շատ անհամբեր ես, գաւակս, դու իմ ըսածս ըրէ:

Եւփիմէ առանց ժամանակ անցնելու աս վերջի խօսքերուն վրայ մէկէն սրացաւ սենեակէ սենեակ եւ գաղտնի դուռը բանալով, տեսաւ, որ Թորոս ոտքի վրայ իրեն կը սպասէր. առանց ամենեւին խօսելու ձեռքն բռնեց եւ շիտակ հոն տարաւ, ուր Դիոնիս նստած կը մտածէր, եւ երբ երկուքն ալ իր առջեւը կանգնած տեսաւ, առանց կերպարանքը փոխելու եւ առանց շարժմունք մը ընելու միայն իր սուր աչքերը Թորոսին վրայ ուղղելով՝

– Եւփիմէ գրուցած է քեզի իմ ով ըլլալս, ինք իմ գաւակս է, ուրեմն պէտք է ինձ միտքդ շուտով յայտնես:

Այս առանց յառաջաբանի լակոնական հարցմունքին հետեւանքը թէպէտ երկայն էր, բայց Թորոս մէկէն, մէկ նայուածքով դատեց դիմացի մարդը, հարցմունքին նշանակութիւնը եւ մօտակայ վտանգ մը:

Ուստի առանց դանդաղելու պատասխանեց.

– Թէ որ Օրիորդը այսչափ գեղեցիկ եւ սիրելի յատկութիւններ ալ չունենար, միայն ինձի ըրած բարերարութիւնքն բաւական էին ինչ որ ունիմ՝ իմ անձս իրեն նուիրելու:

– Բաւական է, ազնիւ երիտասարդ, ես ալ քեզմէ սա պատասխանին կը սպասէի: Հիմա նստէք եւ մտիկ ըրէք, որ ըստայնմ շարժիք: Վտանգ մը կայ, եւ վտանգը քու ազգայիններդ մէկէն կը հասնի, որ երբեմն քու հօրդ բերդակալսն է եղեր եւ շատ ալ վտանգաւոր մարդ, 1ւ հիմա Պոլիս կը գտնուի ծպտեալ ու ոստիկանութեան լրտեսները զինք ճանաչէր են եւ իրեն հետքը նաեւ գտեր. աս գիշեր խորհուրդ ալ կայ զինք ձերբակալելու. բայց այս դիպուածեն վերջ կայսեր շնորհքին վրայ վստահիլ անկարելի է եւ մեծ անխոհեմութիւն. ուրեմն դու ի՞նչ կը մտածես, ի՞նչ պիտի ընես:

– Դեռ հիմա աս վայրկենիս կ'իմանամ մօտալուտ վտանգը, թէ որ կարելի է փախիլ՝ հիմա փախիմք, կ'ընես: Բայց ո՞րն է ապահով ճամփան:

– Հիմա ապահով ճամփան սա տունը չի կենալն է, եւ ամիսի մը չափ ժամանակ ծածկուիլն ու ոստիկանութեան կարծեցնել թէ դու փախած ես:

– Ես բանտէ նոր ելած՝ աս ընդարձակ քաղաքին ոչ լաւ տեղեակն են եւ ոչ ծանօթ մը ունիմ. ինչ որ ըսես, կը կատարեմ:

– Լաւ, ուրեմն պատրաստուի շուտով դու եւ ծառադ: Չգեսող եւ յունարէնէ կատարեալ գիտութիւնդ զքեզ չեն մատներ. խոհեմութիւն քեզի չեն յիշեցնէր. ես զքեզ կը ճանչեմ: Հիմա ուրեմն պէտք է ճամփայ ելնես:

Ելաւ ծերուկը եւ դռան մօտենալով «Լազար» կանչեց: Մէկէն երեւցաւ արդէն մեզ ծանօթ տնտեսը:

– Պատրաստ է ամէն բան:

– Այո՛, տիար:

– Ուրեմն, – ըսաւ Թորոսի, – քու ծառադ ալ պէտք է պատրաստուի:

– Ան միշտ պատրաստ է, – պատասխանեց Թորոս եւ շտկուիցաւ դէպի դուռը: Իսկ Եւփիմէ առանց մէկ բառ մը կորսնցնելու, մէկ մը ծերուն, մէկ մը Թորոսին կը նայէր եւ առանց Թորոսի թելը թողլու եկաւ մինչեւ նորա սենեակը, եւ փոքրիկ կապոց մը շինելով ստկի ու ճերմկեղէնի կը սպասէր՝ երբ Բաբկէն իր տիրոջ հետ վեր ելաւ: Եւփիմէ առանց բան մը գրուցելու կապոցը Բաբկէնի ձեռքը տուաւ. անկից վագեց Լեւոնի կախուած սուրը առաւ, Թորոսի երկնցուց, որ ան սիրուն ձեռքը իր շրթանց տանելով սուրը առաւ մէջքը կապեց: Եւ

ասոնք ամենը արագ, բայց անխռով կատարուեցան, իբրև թէ շատոնց որոշուած լինէին, եւ երեքը մէկեն ծերուն քով գտնուեցան:

– Լաւ, – ըսաւ ծերը, – հիմա, Լազար, նայէ՛ ծառայ, աղախին չի գտնուի դուրսը:

– Մարդ չի կայ, տիար. եւ բոլոր լոյսերը մարած են:

– Աստուած բարի յաջողութիւն տա՛ ձեզի, – ըսաւ ծերը եւ Թորոսի ձեռք տուաւ, որ նոյնպէս ձեռքով պատասխանեց:

Եւ երբ սենեկին դռան քով եկաւ, դարձեալ պագաւ Եւփիմէի ձեռքը, որ մինչեւ ան վայրկեան բառ մը բերն են չէր հանած եւ միայն այն ատեն աչքերը արցունքով՝ «Աստուած հետդ ըլլա՛» ըսաւ. իսկ Թորոս մէյ մը երկինք նայեցաւ, մէյ մ'ալ անոր, եւ գլուխը դարձուց դէպ իր ճամփան, ամենայն արագութեամբ, ծածկելու համար սրտին յուզումները. Բաբկէն անշունչ կ'երթար իբրև իրեն շուքը:

Պալատին մէկ պզտի դռնէն Լազար սիրենք դուրս հանեց, եւ լուռ անձայն փողոցներու մէջէն արագ-արագ կ'երթային այս երեք անձինքը, երբ իրենց քովին կ'անցնէին խաւարի եւ անզգամութեան արբանեակներ. մինչեւ որ իրենց սահմանեալ տեղը իջան քանի մը գիշերապահ խմբիկներ ալ եղան, որ իրենց հարցմունք ընելու եթէ պատրաստուէին, Լազար անոնց գլխաւորին ականջէն բան մը գրուցելով ճամփայ կ'առնէր, մինչեւ հասան տան մը դռան առջեւ. հոն Լազար բանալի մը հանելով դուռը բացաւ եւ իր ընկերները ներս մտցնելով դուռը կամացուկ մը գոցեց:

– Ծնորի՛ ձեռքդ, իշխանդ իմ, – ըսաւ, – որ աս մութուն ձեզ առաջնորդեմ, եւ Թորոսի ձեռքն առնելով տարաւ սենեակ մը. Բաբկէնի համար դժուարութիւն չի կար, վասնզի մութուն ալ կը տեսնէր. «Դուք հոս նստէք» ըսաւ Լազար եւ աներեւոյթ եղաւ: Իսկ մեր երկու հայերն սնացին սթութեան եւ խաւարի մէջ, գոնէ Թորոս գիտէր թէ ինչ բանի համար էր այս գիշերային փախուստը. երբ Բաբկէն, որ կարծէր գուշակել՝ ինքնիրեն կ'ըսէր. «Իշխանիկս աս գիշեր աչք գոցած չէ, ես լաւ քնացա... արդեօք Կ'ոստանդնի գալը իմացա՞ծ են. երբ այդպէս է, իրաւ աս հոռոմները սատանայ են. ես չի կրցայ ճանաչել, անոնք ինչպէ՞ս ճանաչեցին... հիմա ո՞ր կ'երթանք, անտարակոյս պիտի տեսնենք... հոռոմ աղջիկը իրաւ գեղեցիկ է... բայց ան սուր աչուի, սնծճակատ ծերը ո՞վ էր... Է՛հ, Բաբկէն, ամէն բան կ'իմանանք... աստուած տար յաջող լինէինք, մէկ մը մեր Սեւ լեռը գտնէինք...»:

Այսպէս կը խորհրդածէր Բաբկէն, երբ Լազար երեցաւ՝ «Երթանք, տիար իշխան», ըսաւ: Քանի մը քայլ առնելով դուռ մը բացաւ եւ ինքզինքնին լուսնի լուսոյ մէջ եւ ծովեզրը գտան: Երեք ջուխտակ նաւ մը կը սպասէր: Հագի թէ տեղաւորեցան՝ նաւը սկսաւ սուրալ պատռելով ծովը՝ թողլով աջ կողմը մայրաքաղաքին եւ ձախ կողմը Ղալաթիոյ ավիտները, քանի մը ձկնորսի նաւեր եւ քանի մը պահնակ նաւեր միայն կային ծովուն վրայ, որոնց մէկ հատը միայն մօտենալով նաւուն եւ Լազար իր նշանի բառը տալով ազատ իրենց ճամփան կը շարունակէին նաւուն գլուխը դէպի Վոսփոր միշտ ուղղելով: Կ'անցնէին շարունակ եւ ետ կը ձգէին այսօրուան Պեշիքթաշ, Օրթագեղ, Առնաուտ գեղ եւ կարգաւ արուարձանաց շարունակում թիւնքը դէպի վեր, մինչեւ որ հասան Թարաբիայի ծովեզրը տան մը առջեւ եւ հոն նաւակը կեցաւ: Ան ատեն Լազար ելաւ ցամաք եւ ձեռամբ հրամցնելով գթորոս, որ ցատկեց ելաւ նաւէն Բաբկէնի հետ, նաւավարներուն քանի մը խօսք ըրաւ ու ճամփեց: Հոն ծովեզրը զիրենք թողլով պտոյտ մը ըրաւ, մտաւ տան քովի ճամփան, գարկաւ ցած երկաթապատ պատուհան մը, եւ պառաւ կին մը ձայն տուաւ ներսէն. երբ իր անունը տուաւ՝ «Աստուածածին, – ըսաւ կինը, – այս ատեն, Լազար, ի՞նչ կ'ուզես»:

– Բա՛ց, մայրիկս, – ըսաւ ձայնը, – հիմա խօսելու ժամանակ չէ, գովը գմեզ սառեցուց:

Պառաւը նիզերը խախտեց, եւ քովնտի դուռը բացուեցաւ: Լազար ներս մտնելով նշանացի լուսնին հրամայեց պառաւին, եւ կանթեղը առնելով ձեռքէն հիւրերը ներս մտուց եւ դռնապանի բնակարանը թողլով, շիտակ զիրենք մաքուր սենեակ մը հանեց, ուր անկողին ամենայն ինչ պատրաստ կար իրենց պիտույից համար:

Գիշերը յառաջացեր էր, լուսինը լիալիր կը թագաւորէր երկնքին վրայ եւ հանդարտ ընթացքը կը շարունակէր, ծովը հանդարտ նոյնպէս, իբրև թէ երբեք պեկոծութիւն չէր ունեցեր.

բնութիւնը վերջապէս իր բոլոր գեղեցկութեամբ գարդարեալ խաղաղութեան կերպարանքն ունէր. Թորոս պատուհանին առջեւ նստած կը նայէր, բայց տեսարանին գեղեցկութիւնը ոչ կը տեսնէր, ոչ կը զգար, այլ նամանաւանդ թէ ատելի կ'երեւար իրեն ամէն բան, եւ դժուար էր որոշել եթէ վերահաս վտանգը՝ արդեօք թէ գեղեցիկին երեսն հապճեպ արտօրն էր, որ իրեն ծանր կը թուեր, բայց ստոյգն հոն էր, որ լուսինը արիւնագոյն կ'երեւէր աչքին, ծովը պղտոր հայելի մ'էր, ծաղիկները հոտ չունէին, եւ սոխակը, որ վար գերուն մէջ կը դայլայլէր մահուան երգի պէս ատելի էր իրեն, վասնզի Եւփիմէ չի կար: «Աւա՛ղ, ուրեմն առանց անոր հայրենեաց փրկութիւնն նաեւ իմ սրտիս չախտի քաղցրանա՛յ», մրմնջեց եւ շտկուեցաւ դէպ անկողին, երբ յանկարծ միտքը եկաւ Բաբկէն, որ հոն կեցեր էր արձանի պէս. միտքը նաեւ եկաւ թէ քանի որ դուրս ելած էին իրենց տանն ոչ բառ մը նա արտասանած՝ եւ ոչ ինք իր պապանձման մէջ խօսք մը անոր ուղղած էր. թէպէտ սէրը խիստ, նախանձոտ եւ անողոք խորհրդական մ'է եւ կը մերժէ ամէն բան, որ սէր չէ, բաց Թորոս շատ մեծ սիրտ ունէր մոռնալու համար այդ ազնիւ մարդուն հաւատարմութիւնը իրեններուն եւ իրեն. ուստի ճամփան փոխեց եւ անոր մօտենալով՝ «Բաբկէ՛ն հայրիկ. դու ի՞նչ կը խորհիս աս մեր դիպումսին», ըսաւ դառն եւ մտերմական ժպիտով մը միանգամայն:

– Ի՛նչ գրուցեմ, իշխանիկս, վտանգ մը թէպէտ կ'երեւայ մեր փախուստ են, բայց կը թուի նաեւ թէ յաջող ելք պիտի ունենանք, վասնզի մինչեւ հիմա կտրած, թափած չուն ինք: Ոչ թշնամին գմեգ հալածեց եւ ոչ ճամփանիս կտրեց. ու սուրը պատեանն հանելու չի պարտաւորեցանք:

– Ճշմարիտ է, Բաբկէն, թէ վտանգաւոր դիպումներ կրնայինք ունենալ, բայց հագիլ թէ բանտն ելած՝ բանտի սպառնալեաց ներքեւ գտնուիլ շատ ծանր է: Հաւերը կը խօսին. արշալոյսը մօտ է, երթանք քնանալ, քու անկողինդ...

– Ո՛հ, իմ անկողինս հոն է, ուր որ բազմոց մը կայ, աստուած քեզի հանգստութիւն տա, իշխանիկս:

Թորոս հագիլ թէ անկողին մտաւ, քունն ալ իր աչաց վրայ ծանրացաւ, վասնզի յոգն ու յոգնածութիւն այն տարիքին մէջ քուն չեն վտարէր նամանաւանդ թէ կ'անուշացնեն: Երբ արթնցաւ, արդէն արեգակը իր ճառագայթներով երկնքի վրայ կը թագաւորէր եւ բնութիւն բոլոր ոտքի վրայ էր: Նոյնպէս Բաբկէն դուրսի սենեակը արեւուն հետ ելած անձայն եւ անշշունջ կը պտտէր եւ առանց երեւալու ձկնորսներու, նաւավարներու, ծովու եւ ցամաքի անցորդներու երթելէր ու իրենց օթեան ած ամառանոցը կը գիտէր, եւ ակռաները կճրտելով՝ «Անիծեալ քաղաք, նգովեց քաղաք, հիմնահատա՛կ ըլլաս». կը մոռնար: Եւ վերջը երբեմն աչք մը կը ձգէր կապոցին, որ Օրիորդը իրեն յանձնած էր իր այլայլութեան մէջ առանց բառ մը գրուցելու, «Մեր Տիկինը, աստուած լուսաւորէ հոգին, երբեք ինձի այդպիսի ամբարտաւան աչք ձգած չունէր, Բաբկէն հայրիկ, հոգիս, հայրիկ, Ռուբենս քեզ են յանձնէր, նայէ՛, կրակոտ է... Թորոս խելօք է, բայց տղայ է...» մեղր կը վագեր շրթունքներէն, ան մեռաւ, մեր բախտը դարձաւ, վերջի անկողին ընկնիլն էր. նորէն ինձի յիշեց, յանձնեց եւ աչքերը իր խոշոր ձեռքերով բռնեցի, կը սրբէր: «Ո՛ր է անանկ տիկին... աս հոռմի կանանց քիթն երկինքն է...»: Եւ Թորոսի ներսը ոտքի ձայնը լսելով՝ տղու մը պէս աչքերը դարձեալ լաւ մը շփեց ու սենեակը մտաւ, գնաց:

ԳԼՈՒԽ Զ ԱՌԻՒԾԻՆ ԿՈՐԻՒՆԸ ԱՌԻՒԾ Է

Մենք տեսանք, որ Եփիմէ մինչեւ վերջը առանց դիմադրութեան կամ խորհրդածութեան բառ արտասանելու օգնէր էր նաեւ Թորոսի փախստեան, վասնզի իր սրամտութիւնը վտանգը յայտնէր, նշարէր էր: Բայց երբ սրահներու նթութեան մէջ տեսաւ թէ իր սիրելին անհետացաւ՝ «Ո՛հ, աստուած իմ», ըսաւ եւ բազմոցի մը վրայ ընկաւ երկու ձեռքերն երեսին վրայ սքողելով, իսկ Դիոնիս անխռով մօտենալով

– Եփիմէ՛, – ըսաւ, – տխրութեանց եւ արտասուաց ժամանակ չէ, քա՛ջ եղիր, որպէսզի կարենանք կատարեալ վտանգին առաջն առնուլ:

– Դեռ վտանգ մնա՛ց ուրեմն, – ըսաւ աղջիկը սոսկումով:

– Անշուշտ՝ թէ որ անհոգ նստինք, ոչինչ՝ թէ որ աշխատինք:

– Բայց չեմ գիտէր թէ ի՞նչ պէտք է ընել:

– Ես ամէն բան պատրաստէր եմ, անհոգ եղիր, միայն գիս մի շփոթէր:

– Ո՛հ, ինչպէ՛ս կ'ուզես, որ անհոգ լինիմ, երբ իմ Թորոսս կորսուի:

– Թորոս կորսուած չէ, եւ վաղը ես ձեր պսակը կատարել պիտի տամ:

– Ի՛նչ կը գրուցես...

– Այո՛, այդ արարողութիւնը գրաւական մ'է քու ապագայ երջանկութեանդ համար, եւ ո՛յ գիտէ թերեւս զէնք մ'ալ է ապագային անկարծելի արկածից համար:

– Բայց ես Թորոսին վրայ ամենեւին կասկած չունիմ:

– Ես ալ չունիմ, մանաւանդ թէ շատ համարմունք ալ ունիմ. բայց ժամանակը, պարագաները, բախտին փոփոխութիւնները մարդկային խեղճ սրտին վրայ շատ եւ անկարծելի ազդեցութիւններ ունին: Ես չեմ կրնար իմ Եփիմէս՝ իր պատիւը, իր ստացուածքը, իր գեղեցկութիւնը երիտասարդութեան փոփոխամտութեան անձնատուր ընէի պսակի արարողութիւնը բաւական գրաւական մ'է:

– Ես բոլորովին քու կամացդ հետեւելով ալ՝ չեմ կրնար մոռնալ ամէն օրուան պսակներու ոչնչանալն պատրիարքական վճիռներով:

– Մեր եկեղեցին շատ թուլացուցած է ամուսնութեան կանոնաց խստութիւնը, բայց հայոց մէջ այդպէս չէ. Անուոյ թագաւորներն նաեւ գիտեմ թէ ամուսնութեան կանոնաց անհնազանդ գտնուելու յանդգնութիւն շատ քիչ անգամ ունեցեր են: Բայց ժամանակ կորսնցնել պէտք չէ:

– Ես քեզի արգելք չեմ, հայրիկ, ըրէ՛ ինչ որ կ'ուզես:

Օճերը շուտ մը ելաւ ծառայ մը կանչեց, ապապբեց Թորոսի տան ծառայող երկու անձինքը առնուլ՝ դեռ չի լուսցած՝ նաւակ մը դնել Թարապիայ տանիլ. երկու որմնագործ, որ արդէն իր հրամանին կը սպասէին՝ բերել տուաւ եւ գաղտնի դուռը ամրացնելէն վերջը հռոմայեցի ծեփով (որու գաղտնեաց հմուտ էր ինք) որմնել տուաւ ներսէն եւ անմիջապէս նստաւ թուղք մը գրեց բարեկամ հայ վարդապետի մը, ուսկից կը խնդրէր ծպտեալ իր ցոյց տուած ժամատեղն գտնուիի եւ երբ այս ամէն բանն կարգադրեց ու կատարեց՝ բարի գիշեր մաղթելով իր սանուհուոյն, գնաց իր սենեակը, քաշուեցաւ քնանալու:

Իսկ Եփիմէ տեսնելով իր ծեր խնամակալին անխռով վստահութիւնը, հանդարտեցաւ. կանչեց իր նաժիշտները զինքը հանուցնելու, եւ իր երկրորդ օրուան երջանկութեան մտածութեամբ զբաղած մոռցաւ գրեթէ ալեկոծութիւնը, որ քանի մը ժամ առաջ զինք կը տարութերէր, եւ երջանիկ քունի մէջ ընկղմեցաւ: Երբ առաւօտուն արթնցաւ, Դիոնիս ելած՝ քանի մը երեւելի անձանց այցելութիւն ըրած, իր է՛ն կարեւոր տեղեկութիւններն ստացած եւ վտանգը հեռացնելու ամէն հնարք ի գործ դրած էր: Ուստի երբ Եփիմէին քով մտաւ՝ նա իր առջի նայուածքէն ապահովեալ՝

– Հայրիկ, ի՞նչ պիտի ընենք այսօր, – հարցուց:

– Կը հագնուիինք, կը զարգարուիինք եւ կ'երթանք զուարճանալու:

– Չուարճութիւ՛ն... ո՛հ, բառը գեղեցիկ է, զուարճութիւն Դիոնիսի համար, իր գրքերէն, իր ուսմունքներէն դուրս. ինչչա՛փ սուղի կը լինիմ քեզի, սիրո՛ւն հայրիկ, – ըսաւ Եփիմէ եւ ծերուն

երեսները պագաւ: Դիոնիս իր բոլոր փիլիսոփայական ծանրութեամբ չի կրցաւ ախորժանաց ժպիտ մը չարձակել, վասնզի ծերերուն բնական է ախորժիլ երիտասարդ գգուանքէ: Բայց դարձեալ պէտք եղած պատրաստութիւնները տեսնել հրամայեց, ամէն բան կարգի դրաւ, եւ երբ ճաշն ըրին, ու Եւփիմէ կը հարցնէր թէ պէտք չէ՞ր պատրաստուիլ, «Քիչ մ'ալ կ'ըսէր ծերը պէտք է համբերել, վասնզի ոստիկանութեան կը սպասեմ». եւ իրօք ծառայ մը եկաւ իմացնելու թէ ոստիկանութեան մեծը կը խնդրէր այցելութիւն մ'ընել պալատին՝ Տիկին օրիորդի հրամանաւ:

Եւ ահա ոստիկանապետն ներս մտաւ ու ամենայն մեծարանք ողջունելէ վերջ՝

– Տիկին օրիորդ, – ըսաւ, – խնդրեմ հրաման տաք, որ քանի մը սենեակներու փոքրիկ խուզարկութիւն մը ընեն մեր պաշտօնատարք:

Ի՛նչ արդեօք, – ըսաւ Եւփիմէ, – միթէ մեծ յանցա՞նք մը՝ ոճի՞ր մը իմ տանս մէջ կը յուսացուի:

– Յուսացուի՛լ, չէ, բայց ո՛յ գիտէ, տանը Յարմարութիւնը, դիրքը՝ կասկածներ կրնան տալ, ուստի ամէն անոնք փարատելու համար...

– Լաւ՛, տիար, ի՛նչ խուզարկութիւն, որ ուզէք՝ տէր էք:

Ան ատեն, շիտակ արդէն մեզի ծանօթ կողմը երթալով, ան սենեակը, որ Թորոսի անկողնին սենեկին կը պատասխանէր, փնտրեցին, նայեցին եւ երբ տախտակամածին բերանը քարածեփ պատ մը գտան՝ ամէն իրենց կասկածները փարատեցան. եւ ոստիկանաց գլուխն խտրութեամբ կարճահասակ մարդու մը դառնալով, որ արդէն մեզի ծանօթ է, վասնզի անգամ մը տեսանք,

– Աս երիտասարդին փախստեան պատասխանատու դո՞ւ ես, տիար Միքայէլ, – ըսաւ, – հսկողութիւնը քեզ կ'ինկներ. պէտք էր, որ դու անոր ամէն շարժմունքը դիտնայիր. եւ ահա մարդը անյայտ կը լինի, եւ ոչ միայն ինք, այլնաեւ անոնք, որ դու տուած էիր իրեն ծառայելու, եւ դու, ապուշ ու անմիտ բառ մը չունիս պատասխան. դատաստանին կը մնա քեզի պատասխանելու. փուճ տեղ բերանդ մի՛ բանար հոս խօսելու:

– Բայց, տիար...

– Մի՛ խօսիր, անօգուտ կաշխատիս ինձ պատասխան տալու Համար, պահէ քու բոլոր ճարտասանութիւնդ դատաւորին, անոր առջեւ միայն պէտք կայ խօսելու: Ոստիկա՞նք, այս մարդը դատարան տարէք:

– Բայց անգամ մ'ալ մտիկ ըրէք, ես այդ երիտասարդին ծառայողները չեմ ճանչեր, անգամ մը միայն տեսայ, երկու օր առաջ եւ այսօր...

– Այդ խօսքով քու յանցանքդ կը ծանրացնես, դու չի ճանչցած մարդկա՞նցդ յանձնեցիր քու հսկողութեանդ յանձնեալ մարդիկ: Տարէ՛ք, տարէ՛ք:

Իսկ խեղճ Միքայէլ, զարմացական ձեւեր ընելով, եւ ճակտեն ջրի պէս քրտինք թափելով, երկու ոստիկանաց մէջեն դուրս եկաւ դատարան երթալու:

Ոստիկանութեան գլուխը յարգանք ողջունելով գեւփիմէ եւ Դիոնիսի կամաց ձայնով յայտնելով իր զարմանքը կ'ըսէր. «Տէրութիւնը կառավարող մեր մեծերը յիրաւի զարմանալի են, ազատ կը թողուն ասանկ վտանգաւոր մարդ մը աս ծովու պէս քաղքին մէջ, մեզի լուր մը չեն տար, եւ խեղճ մարդու մը, որ իր գլխուն տէրը չէ, կը յանձնեն, եւ հիմա կ'ելնեն մեզմէ կը փնտրեն»:

– Եւ դու, տիար, անշուշտ երբ փնտրես՝ մէկը կրնաս գտնել:

– Անշուշտ, – ըսաւ ոստիկանութեան պետը, – թէ որ փախցնողը Դիոնիս չէ:

– Թէ որ նա ինքն է՞:

– Ուրեմն չեմ գտնէր, – ըսաւ ժպտելով պաշտօնատարը:

– Լաւ կ'ընես, – գրուցեց ծերը նոյնպիսի ժպիտով մը:

– Բաւական է այսչափս, իմացայ, ե՞րբ ինձի հրաման մը եկաւ ձեզմէ եւ չի կատարուեցաւ, սիրտդ հանգիստ բռնէ, թող հայ երիտասարդը հանգիստ պտտի, միայն թէ Անդրոնիկոսեն գգուշանայ, վասնզի ամէն շարեաց պատճառ նա է, բաւական է թէ հայ մը գտնուի խնդիրի մը մէջ՝ իր ատելութիւնը դաւ եւ վտանգ կը տեսնէ հոն, երկինք, երկիր իրար կը խառնէ: Քանի-

քանի՞ անգամ կայսրը եւ Ծերակոյտը աս ապուշ երիտասարդին ազատութիւն տալու հրաման ըրին, եւ ինք միշտ արգիլելու ճարը գտաւ, եւ հիմա, որովհետեւ ապստամբ ու վտանգաւոր հայ մը տեսնուած կայ եղեր քաղքիս մէջ, իր գրգռութեամբ երիտասարդը կ'ուզուի, որպէսզի բանտի դատապարտուի, եւ այդ Միքայէլը Անդրոնիկոսի մարդն է: – Աս խօսքերն ըսելով ոստիկանապետը թողուց եւ գնաց:

Իսկ Դիոնիս սանուիոյն գալով, հրաւիրեց պատրաստուիլ երթալու եւ գտնելու համար Թորոս: Եւ քիչ մը ժամանակէն վերջը երկու դեսպակ կը թողուին պալատը եւ կը շտկուէին դէպի ծովեզրը, ուր գեղեցիկ նաւակ մը իրենց կը սպասէր:

Նոյն գիշերը Թարաքիայի ամառանոցին մեծ սրահին մէջ Թորոսի եւ Եւփիմէի պսակի հանդէսը կը կատարուէր հայկական արարողութեամբ, Բաբկէն կնքահօր պաշտօն կը կատարէր ամենայն գոհութեամբ, ներելով սրտանց Եւփիմէի արեան մէջ ինչ որ յունական կաթիլներ կը գտնուէին, եւ ծածկելով ինչչափ որ կարելի էր տրտմախառն ուրախութեան արցունքին քանի մը կաթիլներն:

– Երբ ամէն բան կատարուեցաւ եւ գիշերը կէս եղաւ, Դիոնիսի կարգադրութեամբ մեր հարսն ու փեսան հասարակ նաւակ մը մտած Բաբկէնով, երկու ծառայով եւ մէկ նաժիշտով կ'անցնէին դիմացի Ասիոյ ծովափունքը, եւ ծովեզրէն մղոն մը հեռաւորութեամբ անտառախիտ ծառերի շրջապատեալ գիւղական ամայի տուն մը պատրաստ կը գտնէին գիրենք ընդունելու համար. հոն ի՛նչ որ բնութեան սքանչելիք կար, այս երկու գեղեցիկ անձանց ուրախութիւնը կը պսակէր. Բաբկէն իր լեռներուն գարունը կը Յիշէր, եւ երբ իր երկու սաները կ'ելնէին բնակարանէն եւ կը սկսէին հեռանալ, իր երկասայրին մէջքը՝ հեռուանց անտեսանելի՝ անոնց յետոց կը հետեւեր, պահապան եւ աշալուրջ գամփոփ մը պէս ամէն ծառի՝ ամէն բլրակի շուքը կը քննէր, որ վտանգ մը անոնց չի պատահի:

Ութ օր աս երջանիկ կեանքն անցուցին մեր նորապսակ ամուսինք, եւ Թորոս իր հարսին քով կը գտնէր ան ամէն գեղեցիկ եւ բարձր զգացմունքները, որ երագն են երիտասարդութեան փափագանաց, ու իւր երջանկութեան՝ միայն իր լեռները կը պակսէին, եւ այն ազգային ազատութեան սէրը որ իր նախահոր՝ Ռուբենի արեան հետ իր երակներուն մէջ կը շրջէր:

Ութ օր էր նաեւ, որ Դիոնիսէն լուր ամենեւին չի կար, այլ ըստ սովորութեան տնտեսը ամէն օր կերակուրը կը բերէր արշալոյսին հետ եւ մէկէն կը հեռանար, որպէսզի կասկածի տեղիք մը չի տայ: Յանկարծ երեկոյ մը ծեր Դիոնիս երեւցաւ. թէպէտ շատ դժուար էր նորա երեսին վրայ գաղտնիք մը նշմարել, բայց Եւփիմէ իրեն սիրալիք ընդունելութիւն մը ընելէ վերջը, երբ քիչ մ'ատեն տան առջեւ աղբիւրին քով նստան, կասկածոտ ծիծաղով մը ըսաւ.

- Հայրիկ, դու մեզի բան մ'ունիս գրուցելիք, եւ կ'երեւայ թէ կը դանդաղիս:
- Այո՛, Եւփիմէ, լաւ գիտցիր թէ բան ունիմ ձեզի հետ խօսելիք, եւ շատ կարեւոր բան:
- Ինչո՞ւ կ'ուշացնես, կ'երեւայ թէ շատ անախորժ լուր մը պիտի ըլլայ:
- Ես, քանի օր է, Թորոսի փախստեան համար նաւ մը կը նայիմ, եւ այսօր հագիւ թէ փնտրածս գտաւ...

– Ինչո՞ւ այդչափ շուտով, հայրիկ, միթէ ինձի համար նաւուն մեջ տեղ չի կա՞յ:

– Մանաւանդ թէ ան կը ցավիմ, որ իմ կարծածիս չափ շուտ չի կրցայ շարժիլ. վասնզի այսօր փոքրիկ նամակ մը ինձ կ'իմացնէր թէ ձեր փախստեան տեղն ինացուէր է ձեր թշնամիներէն, ուստի արտորնօք եկայ զքեզ տանելու, Եւփիմէ: Մինչեւ որ Թորոս իր գործերը կ'արգի չդնէ, մինչեւ որ յաջողութիւնը իրեն չի ծիծաղի, դու ոչ թէ իրեն օգտակար, այլ վնասակար կրնաս լինիլ:

– Ամենեւի՛ն, – ըսաւ Եւփիմէ, որոշ եւ վճռողական ձայնով, – կը փափագէի մանաւանդ, որ դիպուածը այնպէս բերէր, որ կարէնայի զքեզ համոզել իմ ըսածիս ճշմարտութեան:

– Քեզի հետ այս նիւթիս վրայ վիճել ինձ ատելորդ է, տէր եւ դատաւոր այս խնդրոյս մէջ՝ ինձմէ շատ ատելի ուրիշ մը կայ, – ըսաւ ծերը Թորոսին դառնալով:

Իսկ Թորոս այն միջոցին դէպի անտառին խորը աչքերը •անկած կը դիտէր՝ կէս ուշադրութիւն մ'ընելով այս խօսակցութեան, ու երբ ծերը՝

– Իշխա՛ն, դու մեր խօսակցութեան կ'երեւայ թէ ուշ չես՝ դնէր, բայց ես շատ կարեւոր նիւթի մը վրայ կը խօսիմ:

– Այո՛, ձեզ ալ ուշ կը դնեմ, բայց ուրիշ բանի մ'ալ ուշ կը դնեմ, – ըսաւ առանց իր սուր աչքը խախտելու իր նպատակէն:

Ան ատեն Դիոնիս ու Եւփիմէ նոյն կողմը դարձուցին իրենց աչքը եւ թան մը չի տեսնելով դարձան Թորոսի, որ տեսնելով ալ իրենց հարցնող նայուածքին առանց պատասխանելու, ոտք ելաւ, մէկ ձայնովի

– Բաբկէ՛ն, – կանչեց,

– Բաբկէն հոն չէ, – ըսաւ ծառայ մը:

– Ուրեմն, – գրուցեց Թորոս, – հիմա կ'ուզայ եւ մեզի որոշ լուր մը կը բերէ:

– Ի՛նչ բանի լուր, – հարցուց Եւփիմէ այլայլելով:

– Կ'երեւայ թէ, սիրելի Եւփիմէ, մեր թշնամիները, որոնց համար լուր առած ըլլալը ինացուց Դիոնիս, մեզի այցելութիւն մ'ընել կը փափագին:

– Եւ դու հիմա որ բան մը կը դիտէիր, անո՞նք էին, տեսա՞ր...

– Հինգ-վեց հոգի եւ զէնքի փայլիւն տեսա...

– Ի՛նչ կ'ըսես, հինգ-վեց հոգի՛...

– Թէ որ այդչափ են մեր թշնամիները, – ըսաւ Թորոս ժպտելով, – Բաբկէն միայն բաւական է զանոնք ցրուելու, իսկ թէ որ անօթ կրկինն են, պէտք է որ ես ալ օգնեմ: Բայց խնդիրը հոն չէ, – աւելցուց Թորոս Դիոնիսի դառնալով, – «մեր թշնամիները» կրնա՞նք իմանալ թէ որոնք են. կայսրը եւ իր ոստիկանութիւնն է, թէ մասնաւոր մարդիկ:

– Հիմա աս միջոցին քու թշնամիդ Անդրոնիկոս Կեսարն է. բայց թէ որ իր փոքրիկ խումբը վիրաւորուի եւ ցրուի՝ իրենց վերադարձը չգիտեմ թէ ինչչափ բազմութեամբ կրնայ լինիր

– Ուրեմն մեզի պարտք կը ձգես այնպէս շարժելու, որ ասոնցմէ ողջ չի դառնայ:

– Ան չէ իմ միտքս, բայց ըլլալիքը յայտնի է, մէկ փախստական մը տասնապատիկ բազմութեամբ կը դառնա:

– Քու նաղ ե՞րբ կ'ուզայ հոս՝ աս ծովեզրը:

– Վաղն առաւօտ կանուխ:

– Ահա, Բաբկէն, – ըսաւ Թորոս, որ ծովեզրին կողմէն կ'ուզայ, – հիմա ճիշտ լուր կ'առնունք... աս ծանր քալուածքն ալ կը ցցնէ թէ վտանգը մեծ չէ:

Սպասելու լուրսին մը տիրեց, մինչեւ որ Բաբկէն հասաւ, առանց այլայլութեան նշան մը ունենալու իր կերպարանքին վրայ, իբրեւ թէ բան մը տեսած չէր, իսկ երբ որ Թորոս նշանացի հարցուց ի՞նչ լուր կար, ան ատեն պատասխանեց.

– Ես անտառին մէջ պտոյտ մը կ'ընէի երբ, տեսայ, որ քալելու եւ կամաց խօսելու ձայն կ'ուզար ծառերու մէջ քիչ մը հեռուէն, ուստի թումբի մը խստութեան մէջ ծածկուեցայ եւ տեսայ որ երկուք-երկուք 12, 13 հոգիի չափ զինեալ մարդիկ քովես անցան. եւ այնչափ մօտ, որ մէկ հատը, որ տեսած էի արդէն, ճանչցայ. նոյն մարդն էր, որ ասկից տասն օր առաջ առիւծին կորիւնը կը նախատէր: Վերջապէս տեսայ, որ անոնք պտոյտներ կ'ընէին անտառին մէջ խուզարկութեան համար, ուստի, ես ալ կամաց մը ելայ, դէպ իրենց եկած ճամփան գնացի, եւ տեսայ, որ մակոյկ մը գիրենք բերած էր, եւ մէջը պահապան մէկ հոգի մը ձգէր էին:

– Լաւ, – ըսաւ Թորոս անխոռով, – կարծեմ թէ մեր կերակուրի ժամանակն է եւ պէտք է քիչ մը բան ուտել, որովհետեւ հաւանական է թէ վերջը ժամանակ չունենանք:

Եւ չորսերնին մէկտեղ շտկուեցան դէպի տունը, երբ դոնէն մտան՝ պարտեզին վրայ դիտող աչք մը պտոցուց Թորոս եւ Բաբկէնին քանի մը բան ապսպրեց կամաց ձայնով, որ անմիջապէս դռներուն մէկը քարերով ամրացուց եւ միւսը առջի վիճակին մէջ ձգեց. երբ նստան կերակուրի մեր երկու հայերը՝ ըստ իրենց սովորութեան կերան, Եւփիմէ կը խաղար քան թէ կ'ուտէր, իսկ ծերը մտախոհ քանի մը պատահ առնելէն վերջ՝ «Ի՛նչ է քու միտքդ», ըսաւ Թորոսի, երբ նա դադարէր էր ուտելէ եւ անհոգ կը խորհէր:

– Մենք պարտական ենք ինքզինքնիս պաշտպանելու. մանաւանդ որ մասնաւոր անձի մը թշնամութիւնն է, որ մեր կենաց ղխերմաբար կը դարանի, եւ գիշերուան մութը իրեն ընկեր

կառն ու: Կը տեսնեմ թէ դու, իմաստուն մարդ մը, որու նման ես շատ քիչ տեսեր եմ, կը վարանիս, կ'երեւակայեմ թէ քսանը հազիւ անցած երիտասարդի մը գինուց վարժութեան վրայ վստահութիւն չունենաս, բայց այդ մի հոգար, ես տղայ տարիքես գէնքի վարժութեան եւ վտանգի մէջ ծնէր եւ սնէր եմ. անոր համար ալ աս իրիկունը չեմ մտածէր, վաղը կը մտածեմ, այս իրիկունն ան մարդիկը ժամ մը չի քաշէր հաւու պէս կը թօթափին:

Եւ աս խօսքերը այնպիսի անհոգ արհամարհանք մը ունէին, եւ իր յստակ ու որոշ ձայնը այնչափ փոխուած չէր, որ եթէ իր մեծ աչքերուն բոցը չլինէր, որ ամէն շարժումն ինչ կայծակ կը հանէր, արձան կը կարծուէր, այն միջոցին Բաբկէն ներս մտաւ.

– Ե՛լ, իշխանիկս, – ըսաւ, – մարդիկը կ'ուզան, ինչպէ՞ս պիտի ընենք:

– Թո՛ղ զիրենք, որ մեծ դռնեն ներս մտնեն, դու, երբ ամէնքը կը մտնեն, դուրսը կեցիր, ո՛վ որ ելնէ՝ մահուան հարուած մը տոր:

– Բայց դու հոս մինակ ես, անոնք կամ տասներկու կամ տասներեք են:

– Դու լսեցի՞ր, Բաբկէ՛ն հայրիկ, քու պաշտօնդ դռանը դուրսը՝ մարդ ողջ չի հանելն է:

Այնպիսի անդիմադրելի եղանակաւ մը գրուցուեցաւ այս, որ Բաբկէն դուրս ելաւ առանց խօսելու, քթին տակէն աղօթք մը մոմուալով. անտարակոյս աղօթքը Թորոսին համար էր:

Տան վարի պատուհանները երկթէ վանդակներ ունէին, ճրագները վերցնել տուաւ. վերի փեղկերը՝ ըսաւ Դիոնիսին թէ՛ պէտք է պաշտպանել, որպէսզի Եւփիմէ չի վախճայ: Իսկ ինք թուաւ սանդուխներէն վեր, Լեւոնի ահագին սուրը մերկ աջ ձեռքը բռնած եւ երկսայրի սուրը մէջքը, իջաւ փայլակի մը պէս. Եւփիմէի, որ անխօս կեցէր էր, գգուանօք ձեռքը պագաւ. «Միրտդ հանգիստ բռնէ, ժամ մը չի տելեր, ասիկայ դիպումը մէ, – ըսաւ, – վաղուան համար մտածենք»: Սա անխոռվ խօսքերը թէպէտ կ'ապահովէին քիչ մը անոր սիրտը, եւ կուգեր խօսիլ՝ բայց չի կրցաւ, ու նոյն միջոցին տեսաւ, որ Թորոս զինք ձգեց, դուրս ելաւ պարտեզ եւ տան դուռը վրայէն գոցեց ու պատին քով թուփերուն մէջ ծածկուեցաւ: Ինք տան շուքին մէջն էր, ո՛վ որ դռնէն մտնէր՝ որոշ կը տեսնէր լուսնի լուսով. եւ ահա կիսաբաց դուռը բացուեցաւ եւ մէկիկ-մէկիկ գողի պէս կը մտնէին իր սպասած մարդիկը. մտնողը մէկ մը կանգ կառնուր, չորս կողմը կը դիտէր եւ դէպի դուռը կը յառաջանար: Երբ եօթ-ութ հոգի ներս մտան եւ առջի մտնողները տան դռանը եւ թուփերուն մօտեցան՝ ահագին եւ սուկալի ձայն մը որոտաց. Թորոս ինքն էր, եւ հարուած հարուածի վրայ կը յաշորդէր. արդէն երեք հոգի գետինը կը տապալակէին եւ երկուքը փախան. հազիւ ան ատեն երեք հոգի թշնամիներէն կարողացան նորա վրայ հարձակիլ, բայց այս յարձակումնքն ալ նոյնչափ օգտակար եղաւ իրենց՝ որչափ առջի յանկարծակի գալն. երկու հոգի դարձեալ մահացու վիրաւոր կ'իյննէին, եւ իր ահագին սուրը մէկդի կը թոցնէր գէնքերու բեկորները, թելեր, մատեր, եւ վիրաւորը կամ վատք, որ դուրս կ'ելնէին, Բաբկէնը կը գտնէին, որ հարուած մը միայն տալով կը պատկեցնէր զիրենք. եւ որպէսզի արգելք չըլլան ուրիշ ելլողներումէ՝ խղճմտանքաբար ոտքերնին կը քաշէր եւ պատին տակ կը դիղեր: Երբ երեք-չորս եղաւ դիակը եւ տեսաւ, որ դեռ ներսը գինուց հարուածները չեն դադրիր, «Քիչ մ'ալ ներս մտնենք, – ըսաւ, – վասնզի երկայն եղաւ»: Ճիշտ ժամանակին մտաւ, վասնզի չորս-հինգ հոգի գթորոս շրջապատած սուրերնին ձեռուրնին կանոնաւոր յարձակում կ'ընէին. ասոնց մէկուն կոնկին՝ Բաբկէնի սուրին հարուածը՝ գայն գետին գլորցուց, եւ աս անակնկալ օգնութիւնը միւս ամէնքը յուսահատեցուց. փախչելու որոշումն աւին: Թորոս սաստիկ յոգնած էր, իսկ Բաբկէն՝ «Ասոնք ալ թող երթան սատանային գիրկը, ո՛ւմ յոգն է, – կ'ըսէր, – բաւական է, որ սա ինկածներուն մէջ ան անպիտան մեծաբանն ալ գտնուի՝ որ չէր հավտար թէ առիծու կորիւնն միշտ առիծ է: Ապրի՛ս, իշխանիկս, տես քանի՛ մարդ դիաթաւալ կացուցէր է... ես գիտէի, որ քաջ էր, բայց ինչչափ ժամանակ է ոչ կոխ տեսած էր, ոչ գէնք գործածած... լաւ՝ սկսանք, մեր Սեւ լեռն հասնինք, ան ատեն տասնապատիկ պիտի մեծնա...»:

Աս միջոցին լուրին տիրած էր պարտեզին մէջ, գինուց շաշին եւ շառաշին ամէն բան դադրած էր, միայն քանի մը վիրաւորք եւ հոգեվարք կը տքային. ան ատեն Թորոս՝ «բացէ՛ք դռներն» գոչեց, եւ տան դռներն բացուեցան. ճրագներն վազցուցին, տունն ու պարտեզը լուսաւորեցան. դուրսն ու ներսը եօթ-ութ դիակը կայի՛ն, եւ մեր քաջակորովը կանգնած էր անոնց մէջ, կ'ապսպրէր ծառաներուն ողջ մնացողներն ներս առնուլ եւ դարմանել: Իսկ

Եւփիմէ երբ տեսաւ գթորոս՝ ողջ բայց արիւնով ներկուած, եւ երբ ինացաւ թէ՛ չէր անգամ վիրաւորուած, աչքերը ուրախութեամբ երկինք կը վերցնէր, գոհութիւն կ'ուտար աստուծոյ: Եւ առանց ծառաներուն սպասելու ինք շուր կը բերէր, որ իր փեսան մաքրուի, լուացուի: Եւ երբ Թորոս ան ահագին աշխատութենէն վերջը բազմոցին վրայ տարածուեցաւ, Եւփիմէի երեւակայութեան մէջ աշխարհիս բոլոր Աքիլլեաներէն եւ Հերակլեաներէն անլի բարձր էր, ուստի դառնալով Դիոնիսին՝

– Վաղը նաւը, որ պիտի գայ, մենք ալ մէկտեղ կերթանք այնպէս չէ՞, հայրիկ, – ըսաւ:

Իսկ Դիոնիս առանց պատասխանելու աս հարցման՝ Թորոսին կը նայէր, որ նոյնպէս պատասխան չտալով ծերուն կարծիքը կուգեր իմանալ: Իսկ նա երբ տեսաւ թէ երկուքն ալ լուռ կեցէր են՝ «Ո՞ր է Բաբկէն, Բաբկէն հայրի՛կ» սկսաւ կանչել: Բաբկէն ներս մտաւ գլուխն ու երեսը ծածկած եւ հագի քանի մի քայլ կրցաւ առնիլ միայն, նստաւ եւ գլորեցաւ. ամէնքը տեղերնէն ցատկեցին ելան եւ գլուխը բոլոր արնաշաղախ տեսան. ինք մարած էր կամ մեռած: Դիոնիս մէկէն՝ մօտեցաւ, զննեց գլխուն պատռածը, լուաց, վերքերը դարմանեց, պատեց եւ ինացուց թէ սուրի հարուած մը ճակտին ոսկորը թէպէտ կտրէր էր, բայց ուղեղին չէր վնասած, ուստի ապահովցուց զամենքը՝ յուսացնելով թէ քիչ մը ժամանակէն կրնար առողջանալ բոլորովին: Աս վերջին խօսքը մխիթարեց գթորոս բայց Եւփիմէի խնդիրը չի լուծեց:

ԳԼՈՒԽ Է ԱՐԾՐՈՒՆԵԱՅ ՇԱՌԱԻՒՂ ՄԸ

Դիոնիս թեպետ ուրիշները ապահովցուց Բաբկենի համար, բայց զինքը մեկ-երկու ժամ ամենեւին չի թողուց, եւ պաղ ջուր շարունակ գլխուն վրայ դնել հրամայելէն եւ իրեն խօսիւն արգիլելէն վերջ, ելաւ պտոյտ սը ըրաւ անկելոց մէջ. ամէնքը մեռած կամ հոգեվարք էին. տասնմէկ հոգի: Ծերը սկսաւ մտածել. ուրեմն երկուքը փախած էին, եւ առաւօտուն երկրորդ այցելութիւն սը կարելի էր Անդրոնիկոսի կողմնն, որ անոնց մէջ չի կար. եւ Դիոնիս կ'երեւակայէր թէ անշուշտ այդ խումբին գլխաւորը գտնուած էր նա, ուրեմն փախած էր եւ պիտի դառնար, եւ թերեւ Բաբկենի հարուածը տոտողը նա ինքն էր: Ուստի ծառայ սը առած հետն եւ լապտեր սը, դէպի ծովեզրն գնաց եւ ծովուն քով սարդ սը տեսաւ, որ կը ջանար գրկելու ուրիշ ահագին մարդ սը, որ ինկած էր գետին, եւ որ տեսնելով թէ երկու հոգի դէպ իրեն կ'ուզան՝ ցատկեց մակոյկի սը մէջ, որ ծովերն էր, ու միջոց սը անցնելով կեցաւ եւ սկսաւ դիտել. ծռեցաւ Դիոնիս եւ գննեց մարդն ու իր վերքը, մարդը Անդրոնիկոս ինքն էր, վերքը սուրի սը հարուած, որ աջ թոքը վիրաւորած էր, եւ թէ որ թողուէր, մահաբեր կրնար լինիլ, ուստի շուտ սը ծոցն շիջ սը հանելով թաշկինակը թրջեց եւ վերքին բերանը խցեց, արեան դադրիլը եւ դեղին գորութիւնը Անդրոնիկոսի հառաչանաց ձայն սը հանել տուին: Այն ատեն ծերը քիչ սը մտածելէն վերջ դէպի ծովեզրը գնաց եւ մակոյկին մէջ կեցող մարդուն ձայն արձկեց.

– Բարեկամ, – ըսաւ, – դու կը տեսնես, որ մենք քու տիրոջդ թշնամի չենք, իր վերքը պատեցինք, եւ թէ որ կ'ուզես իր կեանքը ազատել՝ եկ մեզ օգնէ, որպէսզի կատարելապէս մահվնէ ազատենք զինքն:

Մարդը քիչ սը մտածելէն ետք խրեց իր մակոյկը ցամաք, ելաւ նաւն եւ ծառային հետ շալկելով վիրաւորը շտկուեցան դէպի տուն: Եւ այսպէս Դիոնիս ապահովեցաւ թէ ալ մարդ չի կար լուր տանելու մայրաքաղաքը: Մանաւանդ որ բուն թշնամին իրեն ձեռքն էր: Միայն չէր կրնայ գուշակել թէ ի՞նչ ընդունելութիւն պիտի ընէր Թորոս իր մահացու թշնամին ամիւն անցնելով. եւ գոհ եղաւ՝ երբ լոյսը մօտեցնելով տեսաւ, որ նա անտարբեր եւ հագիլ թէ արհամարհոտ աչք սը ձգեց իր ոխերին թշնամուոյն վրայ, եւ Բաբկենին մօտ կուգեր տեղաւորել, որպէսզի դիւրին լինի երկուքին ալ միասին խնամք տանիլ: Բայց ծեր բժիշկը, որ Թորոսի մեծահոգիութիւնը կը տեսնէր, նոյնը չէր հաւատար ոչ Անդրոնիկոսի եւ ոչ Բաբկենի համար, ուստի գատ սենեակներ երկուքն ալ գետեղել կը մտածէր: Եւ ահա Եւփիմէ երեւցաւ սենեակին դուռը Բաբկենի ձեռքն բռնած, որուն անխռով կ'առաջնորդէր դէպի սենեակը, իմացնելով Դիոնիսի թէ ինք իւր հիւանդը նայելու մտադիր էր, իսկ թշնամուոյն խնամքը ուրիշներուն կը վերաբերէր:

Դիոնիս՝ մակոյկին պահապանը եւ ծառայ սը Անդրոնիկոսի քով ձգելէն վերջ, երկու մնացած ծառայից հետ մօտակայ ամայի եւ անջրդի հեղեղատի սը մէջ նետել տուաւ դիակները ու երբ ամէն թան կարգի դրաւ, դարձաւ տուն իր վիրաւորները տեսնելու: Անդրոնիկոս կը գառանցէր, ուստի պէտք եղած դարմանները ինչ որ կարելի էր այնպիսի տեղ ապսպրելէն վերջ, Եւփիմէի սենեակը դրան առջեւ եկաւ եւ տեսաւ Բաբկեն, որ անկողնին մէջ նստած կը պատմէր Թորոսին:

– ... Ինձի ըսիր թէ դռնն ողջ մարդ պիտի չելնէ, ես տեսայ փախչողները, ըսածդ մոռցայ. հօրեղբայրդ ըսած էր մեզ. «Տղա՛ք, փախչողին մի դալէք, թողէք երթան», միտքս հոն գնաց, երբ ուշադրեցի, վագեցի ետեւումն, մէկը դռնն տասը քայլ անդին գետին փոցի, միւսը մեծ էր, ուժով կը թուէր. ծովուն մօտ հասայ, դարձաւ, ի՛նչ տեսնեմ, մեր մարդն էր: «Աղու՛՛ս, կա՛՛ց, – ըսի, – առի՞ծին ձագը տեսա՛ր», հագիլ թէ սուրը կուրծքին դրի, գլխու սուրի լաւ հարուած սը իջուց, ինք ալ գլորեցաւ: Աչքերս մթնցան, աղբիւրին վագեցի, լուացի արիւնը, տեսայ որ չի կտրիր. վերարկուս վիրքին վրայ բռնեցի գոցեցի. հոս եկայ. գլուխս պտոյտ կ'ուզար: Տիկնինն ձայնը լսեցի, որ «Բաբկեն հայրիկ» կը կանչէր, եւ ալ ինչ եղայ, չիմացաւ...

– Լաւ, – ըսաւ Դիոնիս, – ես ալ քեզի արգիլած եմ, որ չխօսիս, հանդարտ պէտք է նստիս: Բաբկեն լոց եւ Եւփիմէ ամէնը ճամփեց ու իր վրան առաւ գնա խնամել. դուրս ելան եւ հոն

Թորոս ու Դիոնիս սկսան խորհուրդ ընել երկրորդ օրուան ճամփորդութեան վրայ՝ եթէ նաւը գա, եւ որոշեցին, որ Թորոս երթա, իսկ Բաբկէն առողջանայ լեն վերջ Դիոնիսի եւ Եւփիմէի հետ գա:

Ուստի աս որոշմունքն ընել վերջ արդէն կէս-գիշերն անցած էր, Թորոս ընկողմանեցաւ բազմոցի սը վրայ, իսկ ծերը երբեմն իր ՚հիւանդներուն այցելութիւն կ'ըներ, երբեմն կը սրափէր, մինչեւ արշալոյսը երեւցաւ: Բաբկէն քանի-քան ի անգամ նոյն գիշերն աղաչեց Եւփիմէի, որ զինքը թողու եւ հանգչի, բայց նա շարունակ պաղ ջուր դնելով գլխուն եւ լոնել հրամայելով լուսցուց: Եւ երբ տնտեսն, ըստ սովորութեան, իրենց պատրաստ կերակուրը բերաւ, իջաւ առանձին պատուերներ տալու եւ ետքը իր հիւանդին քով քաշուեցաւ:

Թորոս եւ Դիոնիս նաւուն գալը կը գիտէին, եւ նաւ չէր երեւար, ծովեզրը կ'իջնէին, լուր չի կար, եւ այսպէս կ'անցունէին ժամանակը մինչեւ կէսօր: Անդրոնիկոսի վիճակը ատելի ծանր էր, թէպէտ Դիոնիս չէր յուսահատած, իսկ Բաբկէն թէպէտ ինքզինքը լաւ կը գտնէր՝ կամայ սկամայ իր բռնաւոր տիրութեան ձեռքը մնացեր, Թորոսի կը հարցնէր՝ «Ա՛յ բաւական չէ՞», որ կը ժպտեր եւ պատասխան չէր տար: Կէսօր եղաւ, եւ ճաշի նստան, թէպէտ ամէնուն սիրտը անհանդարտ. Դիոնիս երեւակայելով, որ Անդրոնիկոսի սը անհետանալը չէր կրնար յուզմունք ար չհանել եւ ոստիկանութիւնը Թորոս փնտրելով գանի պիտի գտնէր. Թորոս, որ նաւուն կը սպասէր եւ Եւփիմէն ու Բաբկէնն պիտի բաժնուէր. Բաբկէն, որ իր տիկնոջ խնամքն երէն կը քաշուէր, կ'ամաչէր եւ ձեռք են ազատելու ճարը չէր տեսներ, միայն Եւփիմէ անխօս, անմտնոյ թժշկին հրամայած պաղ ջուրը Բաբկէնին գլխուն առանց պակաս ընելով՝ նստած տեղէն ծովը կը դիտէր. անոր համար ալ հագիւ քանի սը պատառ առած ելաւ հիւանդին քով երթալու: Դիոնիս իմացուց թէ ալ Բաբկէնին համար վտանգ չի կար. եւ թէ ուղեղին ցնցմունքն, վերքին եւ հարուածոյն հետեւանք հիւանդութիւնն ալ անցեր էին, ուստի հանգիստ կրնար ընել. իսկ Եւփիմէ առանց պատասխան տալու գնաց վեր եւ հագիւ թէ սենեակը ելաւ եւ պատուհանին աչք սը ձգեց՝ գողի սը պէս մատուրներուն վրայ կոխեղով՝ իջաւ սանդուխտն եւ պարտեզին դուռը գտաւ. հոն տնտեսը դիմաւորելով՝ ձեռքի կապոցը առաւ. – Նաւեն լուր առի՞ր, – հարցուց:

– Գենովացի նաւը կ'ուզայ, ջուրը պիտի առնու եւ ճամփայ ելնէք

– Լաւ, դու մտիք սեղանատուն եւ իմաց տուր:

Եւ ինք կապոցը ձեռքը սրացաւ վեր, մտաւ իր սենեակը:

– Բաբկէն հայրիկ, բժիշկը քեզի հրաման կ'ուտայ ելնելու եւ հանդարտ ծանր քալելու. դու ինչպէ՞ս ես:

– Ո՛հ, Տիկինս, աստուած քեզի երկար կեանք տա, ես լաւ եմ, ահա կը տեսնես, – ըսաւ ճակտին լաթը վերցնելով եւ կանգնելով:

– Չէ, մարտորար, – ըսաւ Եւփիմէ, վերքը լաւ սը փաթթեց, ինչպէս տեսեր էր Դիոնիս են, գլխարկը գլուխը գրաւ, – հիմա հանդարտ քայլերով դուրսի սրահը գնա, ինձի սպասէ:

Եւ աս խօսքերը այնպէս մայրենի անուշութեամբ սը ըսաւ, որ խեղճ Բաբկէնի աչքերը չցունեցան, եւ առանց բերանը բանալու ձեռքը երկնցուց. Եւփիմէ ձեռքը տուաւ եւ կորովի ծերը իր շրթունքները վրան դնելուն երախտագիտութիւնն եւ որ մեծն է մանաւանդ իր համարմունքը կը յայտնէր, բոլորովին գոջալով իր առաջին գիշերուան կասկածանաց վրայ: Ուստի դուրս ելաւ, նստաւ սրահը եւ որովհետեւ Տիկինը ըսած էր թէ ալ առողջ էր, միտքն ինկաւ թէ անօթի է, եւ գոջաց թէ ինչպէ՞ս Տիկնոջը չէր հարցուցեր թէ ի՞նչ կրնար ուտել:

Այս ծանր խորհրդածութեան վրայ էր Բաբկէն, երբ Թորոս եւ Դիոնիս սանդուխտն վրայ երեւցան կամաց ձայնով խօսելով:

– Դու չե՞ս ճանչեր Եւփիմէն, – կ'ըսէր ծերը, – ոչ թէ միայն դու, ես նաեւ չգիտեմ թէ ի՞նչ կերպով պիտի կարենամ ազատիլ ձեռքեն:

– Ես ալ չեմ ուզեր եւ չեմ կրնար իրմէ գատուիլ, բայց դու, ազնիւ բարեկամդ իմ, դու, որ աշխարհք կը ճանչես, լաւ կրնաս դատել իմ վիճակս եւ թէ ի՞նչ վտանգներու դիմագրաւ պիտի երթամ. ինչպէ՞ս այսպիսի անձ սը, բայց դուրը կը բացուի... .

Երկու խօսակիցը ապուշ մնացին, տեսնելով, որ սենեկէն դուրս ցատկեց վայելուչ եւ պարզ հագուստով, մէջքը դաշոյնով, խիստ ժպիտով տասնութ տարեկան գեղեցիկ եւ կորովի

պատանի մը, որ առանց խօսելու սրահին մէջ կանգնեցաւ, եւ անքթիթ իրենց կը նայէր: Անոնց զարմանքեն աւելի մեծ եղաւ Բաբկէնի հիացումը, որ ձեռքերը երկինք վերցնելով՝

– Փա՛րք աստուծոյ, կեցցէ՛ մեր քաջ Տիրուհին, – կանչեց:

Եւ լուրջինը դարձեալ յաջորդեց: Վերջապէս Դիոնիս դառնալով Թորոսի՝

– Տեսա՞ր, իշխան, – գրուցեց, – ես քեզի չասի՞...

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, [купив полную легальную версию](#) на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.